

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.	Տեղա, Դե, Տե, Դե	Ս. ԵԱԶԸՃԵԱՆ
ԳԻՏԱԿԱՆ.	Քոյերայի փոխադրական լինելն հերքող փաստեր ...	* * *
ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ.	Սեպերիայէ Ի Զուլիցերիա փախստեան մը պատմութիւն	Ա. ԳԵՈՐԳԵԱՆ
ԱՐՀԵՍՏԱԿԱՆ.	Շարժական դմբեթներու մեծագոյնը	Յ. ՏՈՒՏՈՒԽԵԱՆ
ԳԱԻԱԻ. ՍՈՎՈՐՈՅԹ.	Խուլթիկ գիւղ. — Տարեկան սովորութիւններ	Հ. ԷԿԻՆԵԱՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ.	Խորոտիկի տաղ (յաշըք Շիրինէ առաջեալ) Հաւաքեց	Մ. ՉՕՊԱՆԵԱՆ
ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲ. ԼՐՈՅ	Արտաքին, Ներքին, Ազգային	
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ.	Կզալիէ տը Մոնթէրէն) Թարգմ.	

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ.....	տարեկան.....	Կէս ոսկի Օսման.
»	վեցամսեայ.....	Քառ » »
Գաւառներ.....	տարեկան.....	Կէս » »
Օտար քաղաքներ.....	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք »	»	15 դան. արծաթ
Մէկ թերթին գինն է.....	»	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛րեւէ գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
Ղալաթիա, Նորայտունիեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱՆԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 17 Մայիս

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտոնայի վրայ պանքայի	110 7/8
3 » » (վճռահան)	110 1/2
3 » Բարիի » (պանքայի)	22 80
» » » (վճռահան)	22 87 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԱՅԻՆՈՅ

Օսմանեան Բոսնիոյիտե

Դահլեյան

Երեկ երեկոյ Գոց. (Միաց. Դ. Ս. Ի)	17 31
Պորտային գոցուկէն վերջը »	17 30
Բերայի մէջ »	—
Աւաւոտուն բացուեցաւ »	17 32
Բարձրագոյն գին »	17 32
Նուազագոյն »	17 31
Կէս օրին »	17 32
Փոխաւճիւրն 1858)	
» 1862) A. Սէրի Գ. Կ. Ա. Ո. 32 20	
» 1860)	
» 1863) B. » 18 20	
» 1872)	
» 1865)	
» 1869) C. » 17 30	
» 1873)	

Իւնիֆիէ եղիպաւական

Երեկ երեկուն գոցուեցաւ	70 35
Այս առտուն բացուեցաւ Գ. Կ.	70 35
Կէս օրին	70 35

ԲԱԺՆԵՏՈՒՄԱՐ

Սօրիէթէ Եւնէրալ..... Գ. Կ. Անգլ. Լ. Բ.	3 42
Քրէտի Եւնէրալ..... » » Օսմ. »	6 35
Պանք տը Գոնա..... » » » »	4 — 37
Սոս. Շանժէ վալէօր » » » »	30
Թրամուէյ..... » » » »	270
Բուսէլիի երկաթուղի..... Ֆը.	43 25
Օպիկապիտոն տը Բրիտիթէ..... »	—
Բաժնեթուղթ Լաւրիօմի..... »	64

ԵՐԻՐՈՒԹՅԱՆ ՊՈՐՍԱ


Լոնտոն, 28 Մայիս, ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քոնսօլիտէ	400 7/16
Օսմ. » Սէրի Գ. բացուեցաւ	46 3/16
» » » գոցուեցաւ	46 1/4
» » » Ա.	32 1/2
» » » Բ.	48 1/4
» » » Գ.	46 1/8
Օթօման 1874.....	66 3/4
Փոխաւճիւրն 1877.....	78 3/4
Պանք Օթօման.....	44 3/8
Ռուսական փոխառ. 1873.....	94 1/2
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ).....	63 3/4
» » » (Բրիտիթէ).....	84 3/8
Տայրա Սանիէ.....	60 3/4
Տօմանիալ (փոխառ. Բօշիլա).....	84 3/4

Հունգարական պարտաթուղթ 40/0.....	—
Փոխաւճիւրն Բարիի վրայ.....	—
վ. Եւնա, 28 Մայիս, ժամ 4 երեկոյ	
Փոխաւճիւրն Լոնտոնի վրայ.....	125 20
Ռամանեան երկաթուղի.....	20 70
Բարիզ, 28 Մայիս, ժամ 3 վայր. 45 երեկոյ	
Փոխաւճիւրն Ռանթ 4 1/2 0/0.....	109 05
» » 3 0/0.....	80 42 1/2
Օսմանեան քոնսօլիտէ Սէրի Գ. բացուեցաւ	46 37 1/2
» » » գոցուեցաւ	46 45
» » Սէրի Բ. »	48 40
» » Գ. »	46 50
Օսմանեան երկաթուղի.....	42 1/2 1/2
» Իէժի Բաժնեթուղթ.....	—
Պանք Օթօման.....	540
Գրէտի Լիօնէ.....	535
» Ֆիոնիէ.....	1342 50
Բաժնետոմս Լիօնի ..	1242 50
Սուէզի ջրանցք.....	2096 25
Ռուսական 5 0/0 1877ի Բարձրացում.....	99
Խալալական Ռանթ.....	95 60
Եգիպտական միացեալ.....	322 50
Սպանիական (արտաքին).....	59 3/8
Բրիտիթէ Թիւրք.....	380
50/0 Հելլենական.....	336 25
Վէք Լոնտոնի վ. »	25 20

ԼՈՅԹԸՆ ԵՒ ԶԻՄՆԻԼ ՄԹԵՐԱՆՈՅ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԵԱՅ

ԲԻՐՔՃԻ ԳԱՅՈՒՄԸ, ՂԱՆԱԹԻԱ



«ՕՐԻԱՆ» Մականուանեալ Հնձող մեքենայն երկու-ձիով կը քաշուի և կը կընէ 300 օխա :

ԳԻՆ՝ 35 ՕՍՄ. ՈՍԿԻ Է

Մեքենային կատարեալգործութիւնը եւ քաշաւորեալ է : Գնողըն երբ գոհ-չիլիքի, կընայ ետ առնուլ իւր ստակն :

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա.Զ.Գ.ԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34 րդ ՏԱՐԻ

1885 ՄԱՅԻՍ 18

ԹԻԻ 3770

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 18 ՄԱՅԻՍ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տէվա, Դի, Տի, Դեի

Բառ՝ որ այնչափ կերպարանաւորիս եղած ըլլայ ձայնով եւ նշանակութեամբ, դժուար կը գտնուի Տէվա բառէն զատ ուրիշ երկրորդ մը: Վախճան երկայնածիղ դարերու մէջ Ասիոյ եւ Եւրոպայի ամեն կողմերը գընացած բառ մի է, եւ Արիաիան ազգին ամեն ձիւղերուն մէջ կ'երեւի իրեն այս կամ այն նշանակութեան առումներով:

Տէվա սանսքրդ բառը յառաջ կուգայ Տէվ բայական արմատէն, որ փայլիլ՝ լուսաւոր լինել ըսել է. իսկ Գէվա ըստ ինքեան ածական բառ մի ըլլալով, կը նշանակէ նախ՝ Աստուած, որոյ հայերէն ըսեր են Դի, Դիփ: — Նախնի Արիք երկնային զօրութեանց ու տարերաց վերայ մեծամեծ կարողութիւններ տեսնելով, անձնաւորութիւն տուեր են անոնց եւ ինքնաշարժ կամք. եւ ամենն ալ կոչեր են Տէվա, ինչպէս աստուածայինք, երկնայինք, լուսաւորք: — Տէվաներն երեսուն երեք են թուով՝ զատ զատ անուններով ու յատկութեամբ, եւ ամենը մէկէն կոչեր են Վխաւատէվա, ամենաղիք: — Տէվա կը նշանակէ նաեւ թագաւոր՝ ինչպէս սըրբազան անձն: — Կը նշանակէ դարձեալ տանուտէր, սուրնի մեծը՝ ցորչափ նա զոհ կը մատուցանէր իւր յարկին տակը: Այս երկու նշանակութեամբ Գէվա բառը մեր լեզուին մէջ եղած է Տի, (տիայր = տէր), որոյ իգականն ալ Գէվի եղեր է Տիկին, դիցուհի, տիրու-

հի: — Տէվա կը նշանակէ դարձեալ քահանայ, եւ մեհենի պաշտօնեայք՝ ինչպէս աստուածային ու սրբազան անձինք, աստուածոց անուանակիցք եւ մերձաւորք: Այս նշանակութեամբ յոյժ շատ անգամ կը տեսնուի Սկվետայի երգոց մէջ, եւ որ մեր այս գրուածքին նիւթ պիտի ըլլայ: — Տէվա բառին այսչափ զանազան նշանակութիւն առնող պատճառն՝ իւր ածական ձեւին յատկութիւնն է. բառ՝ որ վետայեան տարերապաշտ Արեաց սեփական է, անոնց մտաց ծնունդ դիւտ եւ ստացուած: Իսկ դալով դրողաշտական հաւատքի Արեաց հասկացողութեան, տէվա բառին մինչեւ հիմա ցուցուած լուսաւոր եւ աստուածային նշանակութիւնքն կը դադարին, եւ կ'ընդունին այդ մտաց բոլորովին ներհական եւ հակոտնեայ նշանակութիւններ:

Ձրադաշտի հաւատքը, այսինքն աւեստական մատենին մէջ հրատարակեալ հաւատքը՝ մի աստուածական զօրութիւն սկիզբն դնելով՝ ինչպէս կարող արարող խնամող բոլոր տիեզերաց, կը հակադասի վետայեան բազմաստուածութեան, եւ երկնային լուսաւորաց ու տարերաց անձնաւորութիւնն ու կարողական լինելը կը ծաղրէ եւ բողբոջի կը մերժէ ինչպէս թէ եղած չ'ըլլային. եւ տէվա բառին ձայնը պահելով, աստուած եւ աստուածային կամ լուսաւոր միտքը բոլորովին կը շրջէ, եւ կը հասկանայ չար վնասակար սուտ խաբէբայ եւ խաւարային բնութեամբ: Նոյնպէս կը հասկանան եւ Պուտայեանք, Ասով տէվա բառը իւր նախկին լուսոյ եւ աստուածայնութեան դադարիտը կորուսանելով եղաւ խաւարային ու մթութեան յայտնիչ, ինչպէս եւ դժոխային ոգիներն եւս կոչեցան տէվա. որ նշանա-

կուլթեանց հայերէնն պատասխանող բառն է Դեւ :

Հին մեհենաց քուրմերն ու պաշտօնեայք , որ ինչպէս աստուածային մարդիկ տէ՛վա կոչուած էին Վէտայի մեհենական բառով , անոնք ալ Զրադաշտի տեսութեամբ եղան ու կոչուեցան չար ու խարերայ տէ՛վաներ , անսուրբ անախտան էակներ , եւ ստութեան պաշտօնեաներ . այս նշանակութեան ալ հայերէնն ասեր են Դեւ : Քննութեանցս ժամանակ բազում մասնական յայտնութիւնք բաւականապէս հաստատեցին իմ մտացս մէջ ճշմարտութիւնն մի ասելոյ , թէ մեր հին Հայոց աշխարհին մէջ տիրող կրօնքն էր վէտայեան դրութեամբ . եւ զի , Հնդիկք եղած են մեր մեհենական եկեղեցին կարգաւորողը՝ Ակնի Վահագն Վայու Միհրա աստուածները հաստատելով , եւ պրահմական ստորին ժամանակներու մէջ ալ Վիշնուն ու Քրչնան : Ասկէ սա հետեւանքն կ'ոգեմ հանել որ , այն ժամանակ եւ մեր մեհենաց քուրմերն ու պաշտօնեայք ըստ վէտայեան ձայնի անապարակոյս կը կոչուէին տէ՛վա . զոր զրադաշտականք , յետոյ պուտայեան Պահլաւք , եւ յետոյ վերջապէս հին քրիստոնեայք Դեւ ձայնի փոխեցին : Ունիմք ուրեմն այժմ դեւ ձայնին պատասխանող երկու նշանակիչ բառ , մին քուրմ կամ մեհենի քահանայ , եւ միւսն դժոխային ոգի : Այս երկու նշանակութեանց մէջ խաղալիք եղած դեւ ձայնը շփոթ գաղափարներու պատճառ եղած է մեր գրոց մէջ . մինչեւ այնչափ որ , եթէ դեւ բառը քուրմ կամ մեհենի պաշտօնեայ նշանակելը չգիտնայ հայ մարդ , եւ դժոխային ոգիներէն զանոնք չգատէ , շատ անգամ անբաւական կ'ըլլայ ուղիղ հասկանալ գրոց բանքն եւ պատմութեան մէջ ինչ ինչ դէպքեր . եւ աւելի չարն այն է որ շատ անգամ եւս եղբերուաբար նախապաշարմունքներով միտքն ու հոգին կը տառապին : Ի բացատրութիւն առաջդեալ բանիս կը համարձակիմ պատմութեան մէջէն մէկ քանի օրինակներ յառաջ բերել . յորս դեւ բառը հակառակ սովորական հասկացողութեանն՝ պէտք է հասկանալք քուրմեր , ոչ ինչպէս փոխաբերաբար կամ քամահանաց համար զրուցուած բառ , հասկալի դեւեր պատասխանելով տէ՛վա բառին , կը նշանակէ քուրմ եւ պաշտօնեայ մեհենի :

Տարօնի մէջ Դեմետր կուռքը կործանելու ատեն , կ'ըսէ Զենոք , « Պաշտօնեայք կըռոցն ողբային չարաչար . ուր եւ դեւքն կոծէին եւ ասէին վա՛յ մեղ . եւ մարդկօրէն տեսեամբ որպէս թեւաւորք՝ ելեալ գնացին Յաշտիշատի կուռսն » . ըսել է որ Դեմետրի մեհեանին քուրմերը մեհեանը կործանելէն ետքը Յաշտիշատի մեհեանն ապաւինեցան : — Գիտանէ կուռքին կործանման առթիւ կ'ըսէ նոյն պատմագիր , « Զոր օրինակ ընդ դրունս քաղաքի զօրք բազում մտանն , նոյնպէս եւ այս տեղիս դուռն էր դիւաց . զի այնչափ էին դեւքն (քուրմքն) ի տեղեղն Գիտանեայ , որչափ ի սանդարամետս անդընդոց » : Այդ ասացուածը կը նոյնանայ սրբոյ Լուսաւորչի խօսքին հետ (թղթ. առ Ղեւոնդ եպիսկոպոս) , որ կ'ըսէ , « Ի լերինն որ կոչի Տաւրոս որջացեալ էր մահ յերկուս տեղիս , եւ այնչափ որջացեալ ի միում վայրի , մինչեւ ի սրբոյ Հոգւոյն յայտնեալ , թէ նա իսկ է դրունք դժոխոց » : Ո՛ր խօսքերը կը ցուցնեն թէ Խննակնեան տեղւոյն վրայ , որ զլսաւոր մեհեաններէն մին էր , յոյժ շատ բազմութիւն էին քուրմերը : — Երբ Սուրբ Գրիգոր գնաց Յաշտիշատի կուստունքն կործանելու , այն տեղի քուրմերը կուստան դռները ծածկելով անյայտ ըրին . զի երբ կործանիչները մօտեցան , « Շատ Զանացան եւ ոչ կարացին զդուռս բազնացն դրտանել , զի ծածկեցին դեւքն ի նոցանէ » . Ագաթ . Ճժե : — Երբ Տրդատ Արտաշատ կ'երթար Անահայ մեհեանը կործանելու , իւր ձամբուն վրայ էր որոնդական ուսման վարդապետարանն ու մեհեանը , զոր աւերեց . հոն « Երեւեալ կերպարանօք դիւացն (քրմաց) ի նմանութիւն առնել ձիոյ բազմութեան եւ կալմութեան գնդի , եւ հետեւակազօր մկնդաւորք եւ սունաւորք առաջի ընթացեալք ի կերպարանս մարդկան նմանութեան նիզակօք եւ նշանօք , ի գէն եւ ի զարդ վառեալք , մեծաւ գոշելով զաղաղակ հարեալք փախստոյս յանահատական մեհեանն անկանէին . ուստի ընդ հասեալ (զօրսն արքունի) մարտ եղեալ կուռէին , նետս անոյժս եւ քարավէժս թանձրաթափ ի վերուստ ի շինուածոյն ի խոնարհ զմարդկան ցնդէին » . ըսել է քուրմերը շատ դիմադրութիւն ըրին արքայական զօրաց : — Երբ Ս. Գրիգոր հոն հասնելով կրակ տուաւ փայ-

տակերտ շինուածոյն, « Ամենայն դեւքն (քուրմերը) ի փախուստ դարձեալ առաջի մարդկանն երեւեցան » . զգեստնին թողին, ձեռքով զլուխնին ծեծեցին, մեծածայն դռնէցին ու ըսին, հիմա ո՞ւր փախչինք . « Երթա՛մք մեք ի բնակիչս լերինն Կովկասու, թերեւս հնար լիցի ապրիլ . իսկ սեւադուռնդ դիւացն (սեւ հնդիկ քուրմեր) աներեւոյթ եղեալ՝ չքոտեալ ի տեղւոյն իբրեւ զծուխ պակասեցան » . Ագաթ. ճԹ : — Գարնադեաց դաւառի թորդան դիւղին մէջ Բարչամնի կոոց մեհեանքն կործանուէն ետքը « Նշանք մեծամեծք երեւեալ կերպակերպ նմանութեամբ դիւացն, փախստական լինելով անկանէին ի կողմնս խաղտեաց » : — Երբ Եկեղեցաց դաւառին Երեզ աւանին մէջ Անահայ պատկերը կործանելու գնացին, « Երեւեալ դիւացն (քուրմերը) ի տեղի պաշտաման անահտական մեհեանցն ի նմանութիւն վահանաւոր զօրու ժողովեալ դիւացն (քուրմերը) մարտնչէին, եւ մեծամեծ բարբառով զլերինս հնչեցուցանէին » : Ագաթ ճԹ : — Սուրբ Հոփոսիմեանց պատմութեան մէջ, զոր նախընթաց յողուածովս յիշեցի՝ « Աճաւն կոչեցեալ տեղի դիւաց լցեալ պաշտամամբ » խօսքը, եւ դարձեալ « Զայրագնեալ դիւաց խեղէին զպաշտօնեայս իւրեանց », քուրմ կը հասկըցուի, եւ անով իմանալի կ'ըլլայ պատմութեան դէպքը : — Նոյն դիւսին մէջ ուրիշ անգամ, « Գնացին ի գլուխ լերինն Պաղատոյ, զորս ասէին սաստիկ ի նմա լեալ դիւացն, տուն Արամաղդայ եւ Աստղիայ մեծարէին, եւ յաճախ սլաշտամամբ տօն կատարէին » : Հոս Էւճ, Էւճա, Էւճա հնդիկ բառերը, որ Արնեայ կրօնիկն ձօն եւ նուէր մատուցանել կը նշանակեն, հայերէն թարգմանուած է « յաճախ պաշտամամբ » . այդ դեւերն ուրեմն էին հնդիկ ու վէտայեան քսհանայք, եւ ոչ թէ դժոխային ոգիներ : — Յետոյ դարձեալ, « Առեալ զսուրբ նշանն եւ ի վերայ կացեալ աղբերն, փախստական եղեալ դիւացն (քուրմերը), ի բազինս անկանէին . եւ ի բազնացն փախուցեալ դեւքն անկանէին յերկիրն Մարաց » : — Խորենացի Բարթոլոմէոս առաքելոյն վրայ խօսելով կ'ըսէ . « Եկեալ յաշխարհն Անձեւացեաց ի համբաւ քարի միջ . քանզի դեւք (քուրմը) բազումք բն-

նակեալ էին անդ եւ պատրէին զմարդիկ տեղւոյն . հասեալ անդ սուրբ առաքեալն, հալածեաց զգործօնս չարին, եւ զլուսս փշրեաց, որ յանուն Անահայ էր . յոր ժողովեալ բազմութիւն դիւացն (քրմաց) ի վերայ լերինն բարձու, քարաձիգս առնելով անթիւ բազմութեամբ յոյժ, դռչիւն սաստիկ առնէին » :

Այս բանից մէջ յիշեալ դեւերն այնպէս կը ներկայացունեն պատմիչք, իբր թէ սոքա դժոխային դեւեր՝ սատանաներ ըլլան թեւաւոր կամ մարդկային կերպարանք առած ու զրահաւորած, եւ նոյն կերպարանաց տակ՝ արքունի զօրաց դէմ գէնքով քարով ու աղաղակներով կը կռուէին . բայց մեք այժմ դեւ բառին երկու նշանակութիւնքն որոշելով, կը հասկանամք որ յիշեալ դեւերը հոգեղէն էակներ չ'էին, ոչ դժոխքի սատանաներ, եւ ոչ մարդկային առերեւոյթ կերպարանքն առած, հասալ էին նիւթական թանձր մարմնաւոր ու բլրա մարդիկ, որք վէտայեան մեհենի քուրմեր ըլլալուն պատճառաւ տէվա կամ դեւ կոչուած էին : Դժոխային ոգիներն ալ որ դեւ կ'անուանին, պէտք չ'է զանոնք այս նշանակութեան հետ շփոթել : Տուած օրինակներուս նման դեռ շատ կան Յայտնաւորաց եւ սրբոց վարուց մէջ . յորս եթէ դեւ բառին երկու նշանակութիւնքն, այսինքն քուրմ եւ դժոխային ոգի լինելն չ'որոշուին, պատմութեան բանքն պայծառ չ'են հասկըցուիր :

Դեւ (տէվա) քահանայ նշանակող բառը նոյնաձայն գտուելով դժոխքի դիւային ոգւոց հնչման, կարծես իմն հին քրիստոնէից սիրտը կը պարարի՝ երկու նշանակութիւնքն երբեմն եւ կամովին իրարու խառնակել՝ հին քրմութիւնը եւ պաշտած աստուածութիւնքն ահռելի եւ խորշիկ ցուցնելու համար : Այս եպերանաց ջանքովն է որ քուրմերուն բնակած տեղուանքն կոչեր են որջք, զբժոխք, դուռն դժոխոց . ասոր նման գիրքերն ալ բառի ձայնական խաղերով դի, դի.ան. կենդան, դի անուռնչ՝ դիալի (գէշի) նըմանցունելով . երբեմն եւս մահ, դուռն մահու, դերեղման բռեալ . ո՛ր նմանութիւնք աւելի աւելի կը տեսնուին հին մարտիրոսաց վկայաբանութեանց մէջ . Այս կերպ ձեռնարկութեան ձախորդ հետեւանքն այն եղած է որ, փոքրոգի մարդկանց միտքը եր-

կիւղի եւ մուար կարծեաց մէջ պաշարուեցան, իբր զի մէկ շարունակեալ կենակցութիւն կայ ի մէջ մարդոյ եւ դժոխային ոգւոց:

Դեւ կամ տէվա քահանաները վէտայեան եւ Ակնեայ մեհենին պաշտօնեաներ էին. որոց դործն էր սոճա պատարագի հեղուկ նիւթը պատրաստել, կրակը ծընուցանել, նուէրներ ընել, օրհնութիւնը կարդալ, աղօթք եւ կոչմունք կատարել: Այս տէվաները՝ դեւերն՝ դաս դաս բաժնուած ըլլալով, իւրաքանչիւր դաս իւր յատուկ դործն ունէր. եւ վերջին դասը մեհենի ստորին պաշտօնեաներ էին: Հին մեհենաց մէջ առանց Ակնեայ կրակի պաշտամունք չ'կայ. ա՛յլ աստուածոց կոչմունք եւ նուէրները միշտ Ակնեաւ կը կատարէին: Դեւ տէվա բառը յայտնի ապացոյցներէն մին է, որ Հայոց երկրին մէջ տիրած էր Ակնեայ պաշտօնը, եւ այն ալ ազգաւ հնդկի քահանաներու ձեռքով: Վերի յիշուած դեւերուն գունով սեւ լինելը (սեւ քուրմերը) հնդկի ազգէ ըլլալուն ապացոյցներէն մին է. առանց ասոր ալ, անդիմադրելի է Զենորին վկայութիւնը Տարօնի դեւերուն համար, թէ «Սեաւը էին եւ ի Հնդկաց էին» խօսքը: Նոյն իսկ եւ քուրմերը, որ չորս հարիւր յիսուն տարիէ հետէ հաստատուած էին Տարօնի երկրին մէջ, կըսեն թէ «Այս տուն (երկիր, հող) Հայոց է, եւ մեք հիւր»:

Նրբ վերը յիշուած պատմագրաց բանից մէջ կը կարդամք դեւերուն (քրմաց) ըսածը, թէ «Նրթամք առ բնակիչս լերինն Կովկասու, կամ ի կողմն Խաղտեաց, կամ յերկրն Մարաց», պէտք է հասկանալք, որ այն կողմերուն վրայ իրենց հաւատակից պաշտօնակից թերեւս եւ ազգակից քրմութիւններ կային, որ քրիստոնէութենէն դեռ հարուած կրած չ'էին. ըսել է, վէտայեան հաւատքը եւ Ակնեայ կրակի պաշտօնը տարածուած հաստատուած ու տիրած էին բովանդակ արեւմտեան Ասիոյ բարձրագոյն գաւառներուն մէջ:

ՍՏԵՓԱՆՈՍ ԵԱԶԸՃԵԱՆ
(Մնայեալն յաջորդ խոսքով)

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Ք Ո Լ Ե Ր Ա Յ Ի

ՏԱՐԱՓՈԽԻԿ ԼԻՆԵԼՆ ՀԵՐՔՈՂ ՓԱՍՏԵՐ

Բժշկապետ Քէօնինկհամ որ 20 տարիէ ի վեր Հնդկաստանի մէջ բժշկական վարչութեան գլուխ կեցած է, անցեալ տարւոյ վերջերը գիրք մը՝ հրատարակեց քոլերայի վրայ, որ մասնաւոր ուշադրութիւն գրաւած է յԵւրոպա: Այս հեղինակութեան նիւթ մատակարարած են հնդկական թագաւորութեան ամեն մասերու մէջ պաշտօն վարող բժիշկներու քոլերայի մասին ըրած բազմամեայ հաշիւներն: Քէօնինկհամ հիմնովին ընդդէմ է այն տեսութեանց որք ընդհանրացած են Ներոպայի մէջ քոլերայի բնութեան վրայ, եւ բազմաթիւ արժանահաւատ փաստերով կ'ապացուցանէ որ քոլերան փոխադրական չէ. կ'ապացուցանէ նոյնպէս որ աւելորդ ու աննպատակ են եւ շատ սուղի կը նստին ընդհանրապէս այն ճնշումներ եւ նախադրուչական միջոցներ զորս կը գործադրեն քոլերայի՝ որպէս տարախոխիկ հիւանդութեան դէմ: Քէօնինկհամ իւր տեսութեանց ճանարտութիւնը հաստատելու համար կը դիմէ իրական փաստերու որք ըստ բաւականին կը լուսաբանեն խնդիրը: Քէօնինկհամ իբրեւ առաջին փաստ կը ներկայացնէ քոլերայի առաջին անգամ մուտքն յԵւրոպա, այսինքն ի Պափիէրա: Նրբ 1820ի ատեններն քոլերան առաջին անգամ երեւցաւ Ներոպայի մէջ, ամեն ոք փոխադրական հիւանդութիւն գիտցաւ զայն եւ սկսաւ նորա համեմատ զգուշական միջոցներու ձեռնարկել. սակայն թէեւ քրանթիւններ, պատերազմական շղթաներ հաստատուեցան, քոլերայով բռնուած հիւանդները մեկուսացուցին, հիւանդներու հագուստներն այրեցին, տուները շղթաներով պատեցին, այնուամենայնիւ հաւանաբաւ հիւանդութիւնն օր առօր աւելի եւս կը ծաւալէր երբեմն աստ եւ երբեմն անդ, եւ յախուռն ու անսպասելի կերպով կը ճարակէր ամենուրեք:

Բայց երբ Բրուսիա քոլերան փոխադրա-

կան համարելով նոյն տեսութեանց վրայ հիմնուած ահագին գումարներ ծախսեց նախազգուշական միջոցներու համար, և երբ ժողովուրդն ալ տաժանելի նեղութիւններ կրեց, այն ժամանակ միայն հասկցան իրենց կատարեալ անաջողութեան պատճառը եւ քղերայի դէմ ի գործ դրած միջոցները Տոբիս Բոսորի անօրինական անուանեցին: Եւ չափ մարդիկ որք առաջ անպայման կը հաւատային քղերայի փոխադրական լինելուն, բոլորովին մերժեցին այդ տեսութիւնն եւ ընդունեցին այն տեսակէտըն զոր այժմ կը քարոզէ Քիւսիւնկամ, որպէս միակ ճշմարիտ տեսակէտ, այսինքն թէ մարդկային յարաբերութիւնը քղերայի տարածման հետ ընդհանուր կապ մը չունին և թէ սոյն համաճարակ խիստ ինքն իրեն կը զարդանայ ամենուրեք: Յորմէ հետէ քղերան ծագած էր Եւրոպայի մէջ Պալիէրա տակաւին վեց ամբողջ տարիներ զերծ մնաց սոյն ազէտէն: Վերջապէս, 1859ին քղերան երեւցաւ Պալիէրայի մէջ եւս, եւ այն ժամանակ սոյն թաղաւորութեան հպատակներու վրայ հակափոխադրական անթիւ փորձեր կատարեցան որք անշուշտ աւելի մեծ նշանակութիւն ունեցան քան այն բոլոր փորձեր զորս զանազան անասուններու վրայ կը կատարէն այժմ: Պաշտօնապէս յայտարարուեցաւ թէ քղերան փոխադրական չէ եւ կառավարութիւնն որոշեց այս յայտարարութեան համապատասխան միջոցներու ձեռնարկել: Որպէս կը վկայէ քղերայի մասին եղած հաշուեցոյցը, այս համաճարակ հիւանդութիւնը թէեւ տարածուեցաւ ամբողջ Պալիէրայի վրայ, բայց անհամեմատ մեղմ եւ նուազ կործանիչ յատկութիւն ունէր քան նորա զբայի պետութեանց մէջ ուր ամենայն խստութեամբ կ'ընդունուէր քղերայի փոխադրական բնութիւն ունենալն:

Այս ամենն ուրախութիւն մը յառաջ բերաւ այն ժամանակ թէ ի վերջոյ գտնուած են քղերայի սարսափելի աղէտներուն դիմադրելու միջոցները: Այդ փաստերն որք հեռու ժամանակի մը կը պատկանին, անտեղեակ են նոր սերնդին. բայց ըստ որում մեծ լոյս կարող են սփռել քղերայի խնդրոյն վրայ, այդ խնդրոյն, որ համայն պետութեանց եւ ժողովրդոց ուշք գրաւած է, ուստի անհրաժեշտ է յառաջ բերել աստ

քանի մը կտորներ 1856 եւ 1857ին Միւնիխի մէջ տարածուած քղերայի վիճակի մասին, քաղելով այն գլխաւոր հաշուեցոյցէն զոր կազմած է տրքթոր Գոր, որ այն ժամանակ Պալիէրայի բժշկական վարչութեան պետն էր:

Գլխաւոր հաշուեցոյցի 69 երեսի վրայ կը կարդանք հետեւեալն. «Անխոնջ ջանասիրութեամբ եւ անձնագոհութեամբ գիշերու ցերեկ բժիշկներն եւ հոգեւորական անձինք կը հպատակէին իրենց կոչման ազնիւ զգացմանց եւ այսպիսի քաջալերական օրինակներով քղերայի տարափոխիկ լինելու միասակար դաշտախորը կը ցրէին: Ամենեւին պէտք չկար օրէնքին դիմելու կամ ծայրայեղ միջոցներու, որպէս զի նոքա իրենց պարտականութեանց մէջ թերանային. իրենց թաղաւորի եւ նախարարապետի քաջալերիչ օրինակները բնական էին ամեն երկրւոյ վաճառելու իրենց մէջէն և սրտապնդելու զայնս որ անվեհեր, առանց յոգնելու, ծառայութիւն մատուցանեն այս կամայն հիւանդին, հիւանդութեան ո՛ր աստիճանի մէջ ալ որ գտնուին: Շուտով հիւանդապահներէ ու սպասաւորներէ ահագին խումբ մը կազմուեցաւ որ փափաք կը յայտնէր ծառայելու քղերայէ բռնուած հիւանդներու, հիւանդանոցներու, առանձին հաստատութեանց, տուններու մէջ, եւ ուր ալ լինի: Նոցա շատեր ծառայելու անընդունակ համարուելով, մերժողական պատասխան ստացան: Շատ անգամ եւս պատահած է որ տէրեր իրենց տան մէջ կը պահէին իրենց հիւանդ սպասաւորները, կը խնամէին և հոգային զայնս, մինչեւ անգամ բոլորովին օտար մարդիկ կը խնամէին իրենց անձանցով հիւանդներ, եւ հիւանդութեան ամբողջ ժամանակամիջոցին ծառայութիւն կ'ընէին անոնց: Այն յայտնի է որ անձնագոհութեան այսպիսի դնահատելի վարմունքները մինչեւ ո՛ր աստիճան արմատացուցած էին ժողովրդի մէջ քղերայի վարակիչ չլինելու դաշտախորը, առանց որոյ ընկերսիրութեան, մարդասիրութեան եւ բարիատնէական կարեկցութեան բազմաթիւ պարտականութիւնը անիրականաւր պիտի մնային»:

70րդ երեսի վրայ կը կարդանք. «Ժողովրդի այս ոգեւորութեան եւ անձնագոհութեան եւ քղերայի դէմ մղուած այս պա-

տերազմի գլխաւոր պատճառն էր թագաւորն որ իւր հայրական խնամքով անօրինակելի էր : Բժշկական կարեւոր պիտոյք պատրաստ էին ամեն ժամանակ եւ անդադար հոգ կը տարուէր տարածելու այս գաղափար թէ քոլերան ինքնագոյ կերպով կը զարգանայ : Աղքատներուն առատ հաց ու անուղ կը մատակարարէին եւ ձմեռուան մէջ ալ վառելիք : Տակաւին քոլերայի ծագումէն առաջ հասարակութեան համար առանձին յօդուածներ կը գրուէին լրագրաց մէջ, որք խորհուրդ կուտային հոգ տանիլ տուներու եւ գաւիթներու մաքրութեանց եւ առողջարար կերակուրներու մասին, բայց միշտ այն համոզումը կը յայտնէին թէ քոլերան երբէք վարակիչ յատկութիւն չունի :

Տըքթոր Քոք քոլերայի մասին ըրած ախտաբուժական նկարագրութեան մէջ այսպէս կը շարունակէ . « Կան շատ փաստեր որք կ'ապացուցանեն թէ քոլերայի երեւումը փոխադրական կերպով եղած չէ : Ամենեւին կարելի չէ գտնել քոլերայով բռնուած անձ մը այն բազմաթիւ բժիշկներէն որք ամենայն եռանդով կը պատերազմէին սոյն հիւանդութեան դէմ : Նոյնպէս եւ այն հոգեւորականք որ գլխիւր ցերեկ անօրինակ անձնազոհութեամբ կը կատարէին իրենց քրիստոնէական պարտաւորութիւնն հիւանդներու նկատմամբ, նոցանէ ոչ ոք մեռաւ քոլերայէն : Հասարակ դասէն ալ անթիւ անձինք որք կը ծառայէին հիւանդանոցներու մէջ եւ այլ տեղեր, բոլորովին զերծ մնացին քոլերայէ : Այն ըստառաւորք որք կը պառկէին երկու այնպիսի սենեակներու մէջ որոցմէ մէկը միշտ լի էր դիակներով, իսկ միւսի մէջ դիակներն արդէն լուծուելու աստիճանին հասած էին, այն սպասաւորք բոլորովին առողջ մնացած էին եւ նոցանէ ոչ ոք հիւանդացաւ ոչ թէ ծանր այլ նոյն իսկ թեթեւ կերպով ալ, թէ եւ 13 շաբաթ շարունակաբար միջնորդը լցուած էր դիակներու դարչահոտութեամբ եւ միշտ այս ապականեալ օդը կը ծծէին (մի քանի բժիշկներ ոչ միայն քոլերայի վիրաց հոտն, այլ նոյն իսկ համը փորձեցին) : »

Տըքթոր Հանդլու առանձին հաստատութիւն չունենալով քոլերայէ բռնուածներու համար, սաստիկ եւ մեղմ կերպով հիւանդացածներն առանց խտրութեան իրարու քով կը պառկեցնէր, եւ այս վնաս մը յառաջ չէր բերեր :

Տըքթոր Քոք աւելի եւս շարունակելով հետեւեալ կարեւոր իրողութեան վրայ ուշադրութիւն կը դարձունէ : Վերոյիշեալ բոլոր փաստերն ակնյայտնի կը հաստատեն թէ քոլերան ամենեւեակն այնպէս չը տարածուիր որպէս կը տարածուին միւս վարակիչ հիւանդութիւնք : Հաստատուած է նոյնպէս թէ քոլերայէ մեռածներու երկու երրորդ մասը հիւանդներուն մօտեցած չեն ամենեւին : Քոլերայի վարակումն հերքող մի ուրիշ փաստն ալ այն է թէ չը չըլթայուած տուներն եւ տեղերն ընդհանրապէս հաղիւ թէ այնքան մարդիկ կը հիւանդանային ու կը մեռնէին, քան այն տեղեր, որք խտուրթեամբ կը պահպանուէին չըլթայուած ու մեկուսացեալ վիճակի մէջ : Ի վերջոյ գլխաւոր հաշուեցոյցի վերջաբանի մէջ հետեւեալն ըսուած է . « Արքայական կառավարութեան համաճարակ հիւանդութեան դէմ միջոցներու ձեռնարկման նպատակաւ հաստատուած օրէնքներն ամենաօրայեւն կերպով իրականութիւն դտան » :

Եւ արդարեւ ո՞րպիսի խորին թշուառութիւն եւ աղէտք պիտի տիրէին Միւնիխի, եւ ամբողջ Պապիէրայի մէջ եթէ քոլերայի փոխադրական լինելու տեսութիւնը ճշմարիտ լինէր :

1836-1837 ին Միւնիխի մէջ 943 հոգի մեռան քոլերայէ : 1834 ին երբ քոլերայի փոխադրական լինելու հաւատքն աւելցաւ 3,066 հոգի մեռան եւ 1873 ին այդ հաւատք աւելի եւս զօրացան եւ երբ մարդիկ սկսան մաքրողական բոլոր միջոցներու դիմել, 1,466 հոգի մեռան :

Ով որ խոհուն կերպով ուսումնասիրած է համաճարակ հիւանդութեանց փաստերը, նա չընդունիր այն տեսութիւնն իբրեւ թէ քոլերան ջուրի միջոցաւ կը վարակուի . ըստ որում եթէ ջուրն ունենար այդպիսի յատկութիւն մը, այն ժամանակ բոլոր բնակիչները պիտի վարակուէին, սակայն այսպիսի դէպք մը եղած չէ ամենեւին :

Քոլերայի փոխադրական լինելու գաղափարը քարոզողները վերջին ատեններ աւելի մեծ համարձակութեամբ բարձր ոյցուցին իրենց դուրսներն քան երբէք եւ այս այն պատճառաւ որ Բոպերթ Քոլս իրենց կարգն անցաւ :

Ինչ եւ լինի սակայն, սա ճշմարիտ է թէ

բաղմաթիւ փորձերը տակաւին կատարեալ եղբայրացութեան մը հասած չեն եւ գիտութիւնը քրեարարի փոխադրական կամ ոչ-փոխադրական իններու մասին հաստատական վճիռ տուած չէ մինչեւ այժմ եւ տարակուսութեանց մէջ կը մնայ :

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ՄԻՊԵՐԻԱՅԷ Ի ԶՈՒՅՑԵՐԻՍ.
ՓԱԽՍՏԵԱՆ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Քաղաքական եւ այլ չարագործներու Արեւմտեան Սիպերիայէ փախուստըն ընդհանրապէս կարծուածէն աւելի յաճախ տեղի կ'ունենան . իսկ Արեւելեան Սիպերիայէ փախուստը , թէպէտ եւ ստէպ փորձուած , դուն ուրեք յաջողած են : Բաց ի մահապարտից՝ միւս չարագործաց համար դիւրին է խուսափիլ ոստիկանութեան արթնութենէն եւ հեռանալ յանցաւորաց յատկացեալ գիւղէն , այլ դրեթէ անկարելի է խուսափիլ քաղաքէն : Անցանելի անհուն հեռավորութիւնը , կլիմային սաստկութիւնը , դրամի չդոյութիւնը , արահետէն չի չեղելու բացարձակ հարկաւորութիւնը կը հաստատեն թէ սակաւաթիւ պարագայներէ զատ , անպարտելի խոչընդոտներ կան վերջնական յաջողութեան : Բաց աստի՛ կատարելագէտ ազատ ըլլալու համար , փախստական մը ո՛չ թէ միայն Ռուսիոյ արտասահմանը անցնելու , այլ նաեւ այնպիսի երկիր մը երթալու է՝ ուր կայսերական ոստիկանութեան ձեռաց մէջ իյնալէ ազատ ըլլայ : Գերմանիոյ մէջ իսկ վերստին բռնուելու ենթակոյ է նա , եւ Անգլիոյ , Ֆրանսայի եւ Զուիցերիոյ մէջ եւ եթ կրնայ վտանգէ զերծ ըլլալ : Ուրեմն հարկ անհրաժեշտ է այսքան նպատաւոր եւ դրեթէ անհնարին պարագայներու զուգադիպութիւն մը , որպէս զի Արեւելեան Սիպերիայէ կատարել փախուստ մը երեւելի եւ չնաշխարհիկ դէպք մը դառնայ : Այսու հանդերձ խուսափելու շարժառիթը այնքան առատ են որքան յաջողութեան խոչընդոտը :

Չի կայ կեանք մը որ այնքան ահաւոր ըլլա , որքան ի ծայրագոյն Արեւելս Սիպերիոյ քաղաքական աքսորեալի մը կեանքը : Իրքուցքի մէջ իսկ բարեխառնութիւնը Ռէօմիւրի սառուցման կէտէն 50⁰ վար է . արեգակը քըսան եւ չորս ժամու մէջ հազիւ իմն երկու երեք ժամ կը ճառագայթէ եւ մթութիւնը օրերով երկրին երեսը կը պատէ : Մարդ մը որ անլարժ է Փիզիքական աշխատանաց , որոյ անծանօթ են թակարդելու , վայրի անասուններ որսալու եւ անոնց մորթը մուշտակագործելու արհեստները՝ նօթութենէ եւ ցրտէ սատակելու անխուսափելի վտանգին կը մատնուի երբ մնայ ի ծայրագոյն Սիպերիա : Մի ուստացի փախստական , այժմ ի ձինէվա , կը պատմէ թէ իւր Արեւելեան Սիպերիա բնակած միջոցին , ձմրան մեծագոյն մասն անկողնոյն մէջ կ'անցունէ եղեր եւ յայնժամ միայն կ'ելնէ եղեր երբ նօթութիւնը միշտ զինքը , իւր միակ ուտեստը , քիչ մը ծխած իւղ ուտելու : Այսպիսի կեանքէ խոյս տալու համար մարդս ամեն բան աչք կ'առնու . բանտարգելութիւնն կամ հանքերու մէջ շղթայակապ աշխատութիւնն իսկ այսքան անտանելի չեն : Դրժուարութիւնն հոն է որ փախստեան միջոցին հարկ կ'ըլլայ անցնիլ Արեւմտեան Սիպերիոյ եւ Եւրոպական Ռուսիոյ մէջէն : Հարաւային ճանապարհը փակուած է վայրի ցեղերէ , որք կ'ասպատակեն Մոնղոլիոյ եւ Մանջուրիայի սահմանադրութենքն եւ որք կամ կը սպաննեն եւ կամ Ռուսաց կը յանձնեն իւրեանց ձեռքն ինկած բոլոր փախստականները :

Թէ ի՞նչպէս Տէպակորի Մոքրիէվիչ , Բեդրսպուրկի Բժշկական Համալսարանին ուսանող , ի շնորհս իւր համարձակութեան , ճարտարութեան , ուշաբերութեան եւ բազմաւորութեան կրցաւ յաղթել այսքան դժուարութեանց , հետեւեալ պատմութիւնն , իւր բառերով իսկ դրուած , պիտի ցուցնէ : Տէպակորի Մոքրիէվիչ շղթայակապ աշխատութեան դատապարտուած էր եւ շղթայակապ աշխատութեան դատապարտեալ անձի մը ի Սիպերիայէ փախուստը տարօրինակ դէպք մ'է : Փախստականներու մտացածին պատմութիւններ բաղմաթիւ են , իսկ կարծեմ թէ Արեւելեան Սիպերիայէ փախստեան մը պատմութիւն , վաւերական

պատմութիւն ըսել կ'ուզեմ, դեռ չէ ներկայացուած աշխարհի:

Զառաջինն Մոքրիէվիչի վրայօք տեղեկութիւն առի 1881 մայիսին, իւր ի ձինէվա, Զուիցերիա, ժամանումէն փոքր ինչ յետոյ եւ իշխան Քրաքոլքինի թոյլտուութեամբ, իւր աքսորեալ ընկերոջ արկածից մի համարօք նկարագրիւր ստացայ եւ նոյն տարին հաղորդեցի լոնտոնեան օրազրի մը. այլ եւ այլ պատճառներով, որք ոչ եւս են, պատշաճ չի դատուեցաւ հրատարակել յայնժամ այն կարգաւ պատմութիւնը, զոր ընթերցողը ի ստորեւ կը գտնէ:

ՈՒԻԼԻՇՄ ՈՒԵՍԳՈՒ

ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄՆ

1879 փետրուար 11ի երեկոյին, յեղափոխական դատին յարեալ բաղում բարեկամք, յորոց մին էի ես (Տէպալտրիօ Մոքրիէվիչ), ի ժողով գումարեցան Քոսարովսքի տան մէջ, յ'Ելիանսքի փողոց, Քիէվ, այն քաղաքն ուր այն ատեն կը բնակէի: Կարճ խօսակցութենէ յետոյ՝ Անտոն, ես եւ ուրիշներ մեկնեցանք տունէն, ըստ որում երեկոյեան մնացորդը մեր բարեկամուհւոյն, տիկին Պապիէվիչի մօտ պիտի անցունէինք: Անվրիպելի սաճալքը կը պղպջէր սեղանին վրայ. մեր հիւրասէր տիրուհին ջերմ ընդունելութիւն մ'ըրաւ մեզ. սիկառները վառուեցան եւ սկսաւ սովորական խօսակցութիւնն որ մէկ ժամէ աւելի տեւեց:

Նախ Անտոն մեկնեցաւ, որ հազիւ թէ փողոց իջած էր եւ ահա ատրճանակի մը ահագնագոյ բռնիւնը սարսափեցուց զմեզ: Սարսափահար իրարու նայեցանք եւ Սիբրովի դիմացի սենեակը վազելով պատուհանէն դէպ ի դուռը նայեցաւ տեսնելու համար, թէ ի՞նչ պատահած էր: Քանի մը բոպէէն ուրախ զուարթ վերադարձաւ: Արտակարգ դէպք մը տեղի չէր ունեցած փողոցն եւ մեր լսած ձայնը մերձակայ սրճարանի մը դրան բաղկանը կը վերադարձէր: Ուստի վերջապէս սկսանք հանդարտօրէն խօսակցիլ եւ թէյ խմել: Իսկ հինգ բոպէ վերջը նորէն անհանդիստ եղանք, այս անգամ այնպիսի ձայներէ՝ զորս անկարելի էր շփոթել: Գաւթի մէջ ոտից դուրիւնք, աղմկայոյզ գոչիւնք, հրամայական բառեր, զինուոց շաշիւնք

և և, այս ամենքը յայտնի կը ցուցնէին թէ որո՞ց հետ պիտի չափուէինք:

Ոստիկանութիւնը չըջապատած էր զմեզ:

Հակառակ մեր դիմադրելու բուռն փափաքանաց՝ գիտէինք որ առանց կռուի տեղի պիտի տայինք: Զէնք մ'իսկ չի կար մեր քով: Քանի մը անձկալի բոպէներ անցան եւ յետոյ դռները ուժգնութեամբ բացուեցան եւ տեսանք որ դիմացի սենեակը լեցուած էր զինուորներու գումարտակով մը, պատրաստ յարձակելու: Սջ կողմէն հետեւեալ բառերը լսուեցան. « Պիտի անձնատուր ըլլա՞ք, պարոնայք. ես եմ գումարտակին հրամանատար սպայն »:

Զորս կողմն նայեցայ եւ ճանչցայ սուրը քաշած սպայն որ նոյն ինքն Սուտէյքինն էր, յայնժամ Քիէվի ոստիկանութեան ենթասպայ եւ վերջերս մայրաքաղաքին ոստիկանութեան համալսարանի պետ: Հակառակ սպային դաժան դիմաց եւ զինուորներուն շողջողուն սուրհներուն, անկարելի եղաւ ինձ չի ժպտիլ եւ չի պատասխանել Սուտէյքինի այսպէս. « Բե՛րդ մ'ենք ուրեմն, Պ. սպայ, որ կը կոչէք զմեզ անձնատուր ըլլա՞ք »:

— Ո՛չ. բայց ձեր ընկերները... խօսքին մնացորդը չի կրցայ հասկնալ աղմուկին պատճառաւ:

— Ի՞նչ ընկերներ, հարցուցի:

— Պիտի տեսնէ՞ք անմիջապէս, պատասխանեց Սուտէյքին:

Յետոյ հրամայեց իւր մարդոց որ խուզարկութիւն մ'ընեն մեր վրայ, որմէ յետոյ պիտի տարուէինք ոստիկանարան: Խուզարկութիւնը վերջացաւ եւ 30-40 զինուորք շրջապատելով առաջնորդ եցին զմեզ յ'ոստիկանարանն Լիպէտի: Որոշեալ վայրն հասնելէ առաջ իսկ կը տեսնէինք թէ արտակարգ դէպք մը տեղի կ'ունենար: Շէնքը կրակի տրուած էր եւ դրան առջեւ յուզեալ ամբոխ մը կը կենար: Սանդուղներէն իջնելով գետնատեսնեակ առաջնորդուեցանք:

Զինեալ մարդիկ լցուէր էին սենեակը: Ամբոխին մէջէն դժուարաւ յառաջանալով՝ սենեկին միւս կողմը տեսայ մեր բարեկամներէն շատերը: Բայց, ո՞վ Տէր, ի՞նչ վիճակի մէջ էին: Բոպէն եւ Սթէպլին՝ Գամէնսքի ոտքով ձեռքով կապուած էին. անոնց մօտ էին տիկնայք Արնֆէլտ, Սարանտովիչ եւ Բաթալիպինա: Յայտ էր թէ տարօրինակ

դէսք մը պատահած էր Քոստրովսքի տան մէջ: Չէի կրնար սակայն ո՛ր եւ է հարցումն ուղղել բարեկամաց, զի աղով ապացուցած պիտի ըլլայի թէ իրարու ծանօթ էինք: Բայց եւ այնպէս ականջիս հասած քանի մը բառերէն չուտով հասկցայ թէ նոքա զիմադրած էին ոստիկանութեան, ոստիկան մը սպաննած, եւ ամեն անոնք որ ժողովին ցրուելէն յետոյ մնացեր էին Քոստրովսքի տան մէջ, ձերբակալուած:

Հապիւ թէ վերահասու եղած էի եղելութեան եւ ահա քովի սենեկէն լսուեցան ոտից դուրիւնք եւ բարձրագոյ ձայներ, որոց մին ծանօթ թուեցաւ ինձ: Անմիջապէս յետոյ մարդ մը հիւրանոցը խոյացաւ, իւր ետեւէն քաշելով երկու ոստիկանք որ կը ջանային զայն ձեռք անցունել: Նորա ճապաղեալ մտերը, տոգոյն դէմքն եւ բողավառ աչքերը կը ցուցնէին թէ իւր կարողութենէն գեր ի վերոյ կը մաքաւէր: Փոքր ինչ յետոյ ուժաթափ մնաց եւ նստաւ մեր քով:

— Իրարմէ հեռացուցէ՛ք բանտարկեալները, պոռաց հազարապետ Նովիցքի:

Ասոր վրայ զմեզ բաժնեցին եւ իւրաքանչիւրնիս չորս զինուորով շրջապատուեցանք:

— Եթէ զիմադրեն, գործածեցէ՛ք ձեր սուինները, պոռաց նորէն հազարապետը:

Ապա զմեզ մի աւ մի քովի սենեակը տարին: Ես վերջինն էի: Միւս անգամ վրաս գլուխս խուզարկելէն յետոյ.

— Հաճեցէ՛ք ձեր անունը յայտնել, ըսաւ հազարապետ Նովիցքի:

— Յաւէտ ո՛չ, պատասխանեցի:

— Այդ պարագային մէջ պիտի ըսեմ թէ ո՛վ էք:

— Շատ ուրախ պիտի ըլլամ, պատասխանեցի:

— Դուք Տէպակորիօ Մոքրիշվիլէ կը կոչուիք, ըսաւ հազարապետը:

— Այո՛, այդ է ձեր անունը, յաւելցուց Սուտէյքին:

Անօգուտ էր ինքզինքս ուրանալ: Մայրըս, եղբայրս եւ քոյրս կը բնակէին ի Քիւէվ եւ ես չէի ուզեր որ ոստիկանութիւնն անոնցմէ բռնութեամբ իմանար անունս:

Դ Ա Ս Ա Վ Ճ Ի Ռ

Քիէվի գլխաւոր բանտին մէջ էինք: Ապրիլ 20 ին մի օրինակ ամբաստանադիր ընդունեցայ, գրեալ ի Սչրէշնիքովէ, հարցաքննիչ փաստաբանէն Ջինուորական դատարանին (եւ որ ի վերջոյ սպաննուեցաւ յՕտէսա): Ընդ ամենն տասն եւ չորս բանտարկեալ էինք, ապստամբութեան, գաղտնի քաղաքական ընկերութեանց վերաբերելուս եւ ոստիկանութեան զիմադրելուս պատճառաւ ամբաստանեալ: Մեր դատաստանն հրապարակային ընելու համար՝ որդեցիքը Բեդրըսպուրիկի գատարանին մէջ պաշտպանել զմեզ եւ այս նպատակաւ աղերսագիր մ'ալ մատուցինք: Մեր խնդրքը մերժուեցաւ: Յայտնի անիրաւութիւն մը համարելով զայս, բողոքովին պաղարկելութեամբ պատասխանեցինք մեզ ուղղուած հարցմանց:

Ապրիլ 20 ի առաւօտեան ժամը 6 ին դատարան տարին զմեզ: Ութն ի մէնջ արք եւ վեցը կանայք էին: Առաջին բանն որ ուշադրուեց՝ ուղեկից պահապաններուն թիւն էր — առաւել քան հարիւր Քաղաք, ոստիկաններէն դատ: Սպայք յառաջ եւ ետ կը վազվուցէին, հրամաններ կուտային եւ կարգադրութիւններ կ'ընէին իւր թէ պատերազմի դաշտին վրայ ըլլային: Նախ կանայք կ'ընթանային, յետոյ մեք արքս: Թափորը ճանբայ ելաւ. առջեւէն կ'երթար Աիւպէրնէդ ոստիկանապետն, անոր ետեւէն հարիւրապետ Ռիւտով, իմ մի վաղեմի դպրոցակիցս:

Հարկ չի կայ նկարագրել հարցաքննութիւնը — եթէ երբէք կրնայ հարցաքննութիւն կոչիլ. չորս օր տեւեց եւ վերջացաւ ընկերներէս երեքը մահու դատապարտելով եւ մնացեալքն առաւել կամ նուազ ժամանակամիջոցի բանտարկելութեան: Իմ դատավճիռն էր տասն եւ չորս տարի եւ տասն ամիս շղթայակապ աշխատութիւն:

Նորէն ի բանտ առաջնորդուեցանք ճիշդ մի եւ նոյն հսկողութեամբ: Ժողովրդեան արգիլեալ էր իւր ներկայութեամբ կարեկցութիւն յայտնել կա՛մ մեզ եւ կա՛մ այն դատին, որոյ համար այնքաններ կորան:

Դատավճռէն յետոյ փոքր ինչ հանգիստ առինք. արնօծեալ էինք իրարու հետ տեսակցելու: Հարցաքննութենէն առաջ փորձեցին մեր լուսանկարները քաշել, այլ ուժգնապէս զիմադրեցինք: Բանտին տեսչու-

Թիւնն իմացուց մեզ թէ մինչեւ որ չի գիջանէինք իւրեանց խնդրանաց, թոյլ չի պիտի տային մեզ տեսակցիլ: Անպատում մ'սիրտանք էր մեզ համար իրարու հետ տեսակցիլը — այնքան կը սիրէինք զիրեար. արդէն երեքը փոքր ինչ յետոյ պիտի կառավանատուէին: Ուստի զիջումն ըրինք, պայմանաւ որ մինչեւ վերջը իրարմէ չի պիտի բաժնուէինք: Պայմանն ընդունուեցաւ, լուսանկարները քաջուեցան:

Ես բանախն վերի յարկն էի եւ պատուհանէն կը դիտէի կախաղանին շինութիւնը: Գլխատման տեղին բանտէն իբր 2/3 մղոն հեռի դաշտ մ'էր: Ի մահ դատապարտեալը ստորին յարկն էին, այնպէս որ չէին կրնար ակնատես ըլլալ սոյն ահաբիւ պատրաստութեանց եւ ես անշուշտ ամենափոքր յայտնութիւն մ'իսկ չըրի: Վերջապէս, բայց ո՛րքան արագ եկաւ մայիսի 15ը: Թէպէտ մեզ խնաց չի տրուեցաւ, բայց կախաղանին պատրաստութեանց, պահապանից վարմունքէն եւ այլ նշաններէ գուշակեցինք թէ յաջորդ օրը գլխատումը տեղի պիտի ունենար: Ի մահ դատապարտեալքն իսկ գոգցես բռնադժմամբ այդպէս կը զգային: Խանդաղատանօք համբուրեցինք զիրար, սրտաբեկ մնաք բարեւներով բաժնուեցանք:

Հինգ հազար զինուոր եւ ոստիկան կը հըսկէ մեր տարաբարդ բարեկամաց վրայ: Ուրիշ անգամներ իշխանութիւնը միջոցներ ձեռք կ'առնէր գլխատումն առաւօտուն խիստ կանուխ, դեռ ժողովուրդը ի բուն եղած միջոցին կատարելու: Այս անգամ աւելի մեծաշուք եւ աւելի մեծապանծ դըլխատումն կատարեցին. մինչ մեր ընկերաց դիակներն օգին մէջ կը տատանէին՝ զինուորական խումբը զուարթ եղանակ մը կը զարնէր իբրու թէ ուրախանայր մեծ յաղթութեան մը վրայ:

ԱՌԱՔՈՒՄՆ Ի ՍԻՊԵՐԻՍ

Գլխատման ժամանակէն մինչեւ մեր ի Սիպերիա տաքման օրը նշանակելու արժանի բան մը տեղի չունեցաւ: Պէտ պէտ տարածայնութիւններ ելան մեր վրայ. կըսէին թէ կեդրոնական բանտին մէջ պիտի մնայինք — թէ Ս. Պետրոսի եւ Ս. Պողոսի աշտարակներուն մէջ պիտի բանտարկուէ-

ինք — թէ Արեւելեան Սիպերիա կամ Արեւմտեան Սիպերիա պիտի յուղարկուէինք — թէ Սախալին կղզին պիտի աքսորուէինք — թէ տեղ մ'ալ չի պիտի երթայինք եւ եւ:

Վերջապէս մայիս 30 ին խնդիրը պարզուեցաւ: Տասն բանտարկեալք, յորոց մին ես էի, կոչուեցանք յ'ոստիկանարան եւ մեզ պատուիրեցին պատրաստուիլ մեկնելու — թէ ո՛ւր, մեր պահապանք մերժեցին մեզ ըսել զայդ: Յետոյ մեր բարեկամներէն երկուքն որ ազնուական դասուն չէին պատկաներ, չղթայեցին եւ գլխ'ին ածիլեցին: Մեք մնացեալքս ազնուական դուով, այդ անպատուութեանց թէպէտ ազատեցանք առժամանակեայ կերպիւ, բայց ստիպուեցանք զգենուլ յանցաւորաց սովորական երկայն եւ միսրապոյն լօգիլը՝ որոյ կոնակը նշանակուած էր մի դեղին կէտ պարզ քարեալներու համար եւ երկու դեղին կէտ չղթայակապ աշխատութեան դատապարտուող համար:

— Զի՞ պիտի ըսէք թէ ուր կ'երթանք, հարցուց մին ի մէնջ առ զօրավար Կիւպերնէդ:

— Յ'Արեւելեան Սիպերիա, ըսաւ զօրավարը:

Ապա բաղդիս վերահասու եղայ — տասն եւ չորս տարի չղթայակապ աշխատութիւն այնպիսի երկիր մը, ուր անվերջանալի գիշեր եւ բեւեռներու չափ ցուրտ:

Հետզհետէ անցանք Քուրսքի կայանէն եւ Մզէնսք, Մոսկուա եւ Նիժնի Նովկորոտ քաղաքներէն: Ի Նիժնի Նովկորոտ թողուցինք շուքեկառքն եւ յառաջ վարեցինք մեր ուղին գետով ի Բէրմ: Աստ էր որ սկսանք յուշ ածել թէ Սիպերիոյ ճանքան բռնած էինք: Զմեզ ապա փոխադրեցին եռածի կառքերու մէջ, որոց ճակատը կային զինւորք եւ մէն մի բանտարկեալի մօտ կար մի ոստիկան: Փոքր ինչ ծռելով կը տեսնեմ անհո՛ւն հորիզոնն, անտառներ եւ լեռներ: Դիւրին չէ նկարագրել այն գլացումներն զորս տարիներով բանտարկեալք կ'ունենան երբ անգամ մ'եւս չ'ընեն երկնից տղատ օդն եւ ընդնչարեն բնութիւնն իւր բոլոր գեղեցկութեամբ եւ վեհութեամբ:

Այն քաղաքն ընդ որ անցանք մարդաշատ չէր: Լայն պողոտայն անվերջանալի մացառներով սահմանափակուած էր: Ամեն տեսակ

երեւակայութիւնը ուղեղէս կը թռէին : Ար խողայի իմ հօր , մօր եւ բարեկամաց վրայ , կը մտածէի այն դատն՝ որոյ յարեալ էի , կը յիշէի հարցաքննութեանս դէպքերն եւ այն անհ'ղ ապագայն որ ինձ կը սպասէր . տասն եւ չորս տարի չղթայալապ աշխատութիւն յ'Արեւելեան Սիպերիա : Ապա մէկըմէկէ աւելի այլանդակ փախստեան ծրարագրեր կը փոթորկէին մտացս մէջ :

Ար ճամբորդէինք գիշեր ցերեկ . յար նոյն գինուորն եւ ոստիկան , այլ ո'չ նոյն սայլափար : Մերթ կը փոխուին ձիերը . սահապանք կը զարթուցանեն զիրար փոխադարձաբար . քունը զսպելու ծիծաղելի՝ ձիգեր : Գալով ինձ , երեւակայութիւնս կը խափանէ քունս , գաղափար մը կը յղանամ եւ կառքին անկիւնը կը քաշուիմ : Ահա ոստիկանն որ մեռելներու յարութիւն տալու չափ կը խորդայ եւ գինուորն որ կը տատանի երազներու աշխարհին մէջ : Մեղմիւ կ'ենեմ չորս կողմս կը նայիմ : Միլիոնաւոր աստեղք կը պլպլան երկնից կամարին վրայ եւ կը տեսնեմ թէ խիտ անտառէ մը կ'անցնինք : Մի թեթեւ ոստումն եւ ահա՝ անտառին մէջ եմ : Բայց այս անիծեալ լողիկս , ո'րչափ սլտի կրնամ աղատութիւն վայելել աղուով : Ռուսիա վերադառնալու համար՝ հարկ է չի խոտորիլ արահետէն , բայց առաջին ոստիկանն , որոյ հանդիպիմ , պիտի ձերբակալէ զիս : Իրաւ է թէ կրնամ նետել լողիկս , այլ գլխարկ չի կայ եւ մերկ գլուխ անձ մը աւելի ուշադրութիւն կը հրաւրէ իւր վրայ քան այն որ ունի լողիկ : Բաց աստի չուհիմ նաեւ գէնք , որպէս զի որսալով սնուցանեմ արդէն խոնջեալ մարմինս :

Ո'չ , ձգելու է այս այլանդակ գաղափարը եւ աւելի նպատաւոր առթի հսկելու : Մինչ այս եզրակացութեան կուգամ՝ բան մը ներսէս կը հարցունէ ինձ . « Է՞ր չես առներ ոստիկանին գլխարկն ու ատըրձանակը » : Ար խորոյ ա'յ ու կը խորդայ : Թե՛րեւս երբէք չի գտնեմ այսպիսի առիթ մը . երկու ըսպէ եւս եւ աղատութիւն :

Յնձադին կ'աղաղակեմ :

Շունչս բռնելով կը սողամ ննջող ոստիկանին քով եւ մեղմիւ ձեռքս նորա գլխուն վրայ կը դնեմ . չի շարժիր և ահա գլխարկը լողիկիս մէջ է : Գործը մնաց ատըձանակին : Ար քանամ նորա մէջքէն քաշել զայն . դիւ-

րաւ չի գար . նորէն կը քաշեմ . երրորդ անգամ կը քաշեմ եւ ո'հ , խորդալը կը դադրի : Կայծակի պէս անկիւնս կը մտնեմ , երկայն երկայն կը չնչեմ եւ ննջել կը կեղծեմ : Ոստիկանը կը շփոթի եւ գլխարկը կը փնտռէ :

— Է'յ , եղբայր , գլխարկը կորսնցուցե՞ր ես , ըսի :

— Վախեմ այո , պարոն , պատասխանեց աղու ձայնով մը եւ նոյն ժամայն շփելով գլուխը որ չի սառի :

— Ար տեսնես թէ ի'նչ գէշ է ճանքանքնալը , բարեկամս . ենթադրէ թէ կառքէն փախած ըլլայի , ադ կէ դիւրին ի'նչ կար :

— Ո'հ , բայց ադանկ բան մը տարակոյս չի կայ թէ մտքէդ իսկ անցած չէ , ո'չ ալ պիտի անցնի :

— Բայց ինչո՞ւ :

— Վասն զի քեզի մնաց մը չըրի ես եւ կարծեմ թէ չես ուղեր դուն ալ ինձ մնասել : Գիտէք թէ որքա՛ն սաստկութեամբ կը վարուին ոստիկանի մը հետ որ կը փախցնէ իրեն յանձնուած բանտարկեալ մը :

— Աւա , եղբայր , լաւ , ահա գլխարկդ որ գտայ եւ պահեցի քիչ մը քեզ վախցնելու համար :

Ճիշդ նոյն պահուն մի այլ կայարան ժամանեցինք և հէգ ոստիկանը սրտագին շնորհակալութիւն յայտնեց ինձ ո'չ այնքան գլխարկը վերադարձնելուս համար այլ մանաւանդ չի փախցնելուս համար :

Թարգմ. Ա. ԳԵՈՐԳԵԱՆ

(Մնացեալ յաջորդ թուով)

ԱՐՇԵՍՏԱԿԱՆ

ՇԱՐԺԱԿԱՆ ԳՄԲԵԹՆԵՐՈՒ ՄԵԾԱԳՈՅՆԸ

« Թան » լրագիրն հետեւեալ հետաքրքրաշարժ յօդուածը կը հրատարակէ շարժական գմբեթի մը վրայ , որ վերջերս շինուեցաւ ի Փարիզ :

Աստեղագէտը սքանչացման մէջ են : Շարժական գմբեթներու մեծագոյնը , հրաշալիերո յանդգնութեան և միանգամայն հանգըստաւէտութեան , աշխարհիս դիտարանաց մեծագոյնին սահմանեալ , աւարտեցաւ վերջերս ի Փարիզ : Երբ Փարիզ կ'ըսենք , կը չափազանցենք , որովհետեւ իրօք պարսպադռներէն հինգ վայրկեան հեռու , ի Լըվալ-

լուա - Բէռէ, Ֆազիլեօ փողոց, Պ. Էյֆէլի դործարանաց մէջ է որ շինութեաց, եւ անդ է որ այս պահուս կը գտնուի կազմու պատրաստ վիճակի մէջ:

1881ին, հանրագումար շինութեանց նախարարութիւնը մրցման դրաւ 20 մեթր տրամագծով գմբէթի մը շինութիւնն, Փարիզի Ղիտարանին մեծ դիտակը պահպանելու սահմանեալ: Այժմեան գմբէթն, որ «Արալօյի Գմբէթն» անուամբ կը ճանչցուի, եւ որ միայն տասներկու մեթր տրամագիծ ունի, թէ՛ անբաւական եւ թէ՛ անյարմար է:

Դիտարանի գմբէթաց խնդիրն յոյժ կնճառալի է: Խնդիրը չէ՛ միայն անդ հաստատել դիտակն, հապա նաեւ անով կարենալ հետեւիլ աստեղց ընթացքին, որովհետեւ այն ինչ աստղն որ գիշերուան սկիզբն հորիզոնին մէկ կողմն է, վերջը հանդիպակաց կողմը կը գտնուի: Դիտակն երկնից վրայ ուղղեալ է գմբէթին մէկ մեծ ճեղքուածէն, բայց կը հասկցուի թէ եթէ այդ ճեղքուած անշարժ լինի, երկնից միեւնոյն անկիւնն է որ կը դիտուի: Ուրեմն յղացուած են շարժուն գմբէթներ որով ճեղքուածն հորիզոնին չըջանը կ'ընէ, այնպէս որ աստղադէտը կրնայ աստղին հետեւիլ իւր գիշերային ընթացքին մէջ մէկ կողմէն դէպ ի միւսը: Նրեւակայեցէք Բանթէոնի գմբէթն. խնդիրն է շարժուն ընել զայն, այն կերպիւ որ կարենայ ըստ հաճոյս դառնալ մէկ կողմէ միւսը, եւ ինքնին կը հասկցուի թէ ո՞րքան աւելի չուտով և դիւրաւ դառնայ, այնքան աւելի գործնական կը լինի: Մինչեւ ցարդ, բոլոր շարժական գմբէթը անխնայ միայն հաստատուած են, որոց վրայ կը սահին: Նրբ մեքենագործին ձեռներէն կ'ընեն, սքանչելի կերպիւ կը բանին. յետոյ մետաղը կը տարածի, այն շինութիւններն՝ որոց վրայ կը յենուն՝ կ'աւրուին, եւ քիչ ատենէն գմբէթներն, իբր խանդարուած մեքենաներ, անկարելի կը լինին ուղղած կողմը դառնալու: Փարիզի Դիտարանի գմբէթն ութ մարդոց ճիգն եւ քառասունհինգ վայրկեան կը պահանջէր ինքն իւր վրայ չըջան մ'ընելու համար. այսօր կազմով շարժիչ մեքենայ մը հաստատած են եւ կարելի է տասն վայրկեանի մէջ դարձնել զայն, ինչ որ տակաւին հեռի է արագութեան վերջին բաւը լինելէ:

Եթէ ծրագրեր ներկայացուցան հան-

րագումար շինութեանց բացած մրցութեան: Վեցն ի կիր կ'առնուին հին անուամբ դրութիւնը, եթէ ներկայէր: Յանգուզն մեքենադէտն, որուն կը պարտինք 1889 ի Աշխարհահանդէսին համար 500 մեթր բարձրութեամբ երկաթեայ աշտարակի մը հսկայական ծրագիրն, աշտարակ որ երկու անգամ մեծ պիտի լինի մինչեւ ցարդ կառուցեալ յիշատակահաններէն, Պ. Էյֆէլ, կ'առջարկէր շարժական գմբէթն հաստատել ո՛չ թէ անխնայ, այլ պարզապէս ջուրի վրայ: Յայտնի է Արքիմեդիսի սկզբունքն թէ «ջուրի մէջ ընկղմեալ ամեն մարմին կը կորսնցունէ իւր ծանրութենէն մաս մը, հաւասար այն ջուրին ծանրութեան զոր կը տեղափոխէ»: Եթէ գմբէթը կռէր հարկւր հազար քիլօ, օրինակի համար, կը մնար միայն շինել օղակաձեւ ընդունարան մը որ կարենար պարունակել հարկւր հազար լիտր ջուր, անդ դնել ծիփն մարմին մը որոյ վրայ յենուին կամարին հիմունքը, եւ կամարը դիտի դառնար ջուրին վրայ իբր տեսակ մը մեծ նաւ առանց խելքի եւ առաջափողման, եւ որ՝ շարժելու համար՝ պիտի յաղժէր միայն ջուրին աննշան դիմադրութեան:

Ասի այնքան պարզ, այնքան նոր, այնքան յանդուգն էր որ մրցութիւնը քննելու պաշտօն ունեցող յանձնախումբը սարսափեցաւ: Յանձնախումբոց գոյութեան մասը կը կազմէ միջին լուծումները սիրել եւ գարշիլ նորութիւններէ: Եթէ անդամներէն երեքը միայն համարձակեցան քուէարկել ի նպաստ Էյֆէլի ծրագրին: Խնչպիսի կարելի է, կ'ըսէին մնացեալ չորս անդամները, ծիփն մարմինն եւ ընդունարանը պահպանել ոգտատացում: Ի՞նչպէս վերցնել գմբէթն եթէ նորոգութեւն պէտք ունենայ: Ի՞նչպէս պիտի կրէ տատանումներն զորս հովը պիտի պատճառէ իրեն: Բայց ծովակալ Մուշէ, տնօրէն Դիտարանին, հիացած էր գիւտին վրայ, եւ իւր կարծիքն ընդունել տուաւ Դիտարանի զերազոյն խորհրդին, որ, հակառակ քննիչ յանձնախումբին, վճռեց ընդունիլ ծիփն գմբէթն: Ուստի որոշուեցաւ որ, երբ նոր գմբէթ շինուէր, Պ. Էյֆէլ պիտի առնուր իւր վրայ շինութեան հոգը: Մնաց որ սղատոնական որոշում, եւ որ անտարակոյս տակաւին երկար ատեն նոյնը

պիտի մնայ, որովհետեւ շինութեան համար հարկ եղած դրամը չունին:

Մինչ այս մինչ այն, Պ. Պիշոֆսհայմ շինել կուտար ի Նիս, Պ. Կառնիէի՝ Օբէրայի ճարտարապետին միջոցաւ, այն չքեղ դիտարանն ուր քանի մը միլիոններ պիտի ծախսէ յօգուտ դիտութեան, բայց որ սակայն պիտի լինի աշխարհիս դիտարանաց ընդարձակագոյնը եւ լաւագոյնը: Պ. Կառնիէ մին էր քննիչ յանձնախմբին այն երեք անդամներէն որք քուէարկած էին յօգուտ Էյֆէլի ծրագրին. այդ մասին խօսեցաւ Պ. Պիշոֆսհայմի, եւ Պ. Պիշոֆսհայմ, բարեբաստ համարելով ինքզինք իւր Իրաւարանին տալով գիւտին նախախայրիքը, ապապրեց Պ. Էյֆէլի այն գմբէթն որ պիտի պատսպարէ իւր մեծ դիտակն: Եւ այդ գմբէթն է որ այսօր աւարտած է: Պ. Պիշոֆսհայմի մեծ դիտակն 18 մեթր երկայնութիւն ունի. ծփին գմբէթն 22.400 մեթր տրամագիծ ունի ներքնակողմն եւ դիտարանին աշտարակին սալայտակէն 25.55 մեթր բարձր պիտի լինի: Մինչեւ ցարդ շինուած դիտակներու եւ շարժական գմբէթներուն մեծագոյններն են ասոնք:

Ինչպէս քիչ մը վերը ըսուեցաւ, Պ. Էյֆէլի նորութիւնն է ջրով լինի ընդունարանի մը մէջ ծփեցնել գմբէթը: Այդ ընդունարան, օղակի ձեւով, պիտի չըջապատէ դիտարանին աշտարակին պատը. ինք ալ 22.400 մեթր տրամագիծ ունի ներքսակողմը, իւր բարձրութիւնն է 1.50 մեթր. եւ լայնութիւնն 1.20 մեթր. ծփին մարմինն, որ ուրիշ օղակովէ առաջնոյն մէջ մոցուած, նոյնպէս 1.50 մեթր բարձր է, այլ միայն 0.95 մեթր լայնութիւն ունի. ընդունարանին լայնութեան, 1.20 մեթր, եւ ծփին մարմնոյն լայնութեան, 0.90 մեթր, միջեւ պարապ մնացած մասն լեցուած է հեղուկով որոյ վրայ կը լողայ ծփին մարմինը: Ծփին մարմնոյն վրայ հաստատուած են պողպատեայ տասնեւմեց սիւններ որք կը բռնեն բուն գմբէթը:

Ընդունարանի պարունակած հեղուկը Էյֆէլի Գառնիէի տարբաղադրութիւնն ո՛ր է: Հասարակ ջուրն ենթակայ պիտի լինէր ձմեռը սառելու. Էյֆէլի Գառնիէի մէջ զէրոյէն 40 տատիճան վար միայն կը սառնի, ցուրտ՝ որոյ օրինակը տեսնուած չէ տա-

կաւին ի Ֆրանսա: Բաց աստի, ջուրէն մէկ քառորդ աւելի խիտ լինելու առաւելութիւնըն ունին, այնպէս որ այդ տարբաղադրութեան քառորդ մը պակաս պէտք է գըմբէթը ծփեցնելու համար: Քլորի-ր Գառնիէի միադէտներէն իբր մնասող մետաղաց: Պ. Բիքթէ տասն տարիէ ի վեր կը գործածէ դայն իւր զովացուցիչ գործեաց մէջ, եւ հաստատուած է թէ անվնաս է: Ուրեմն ապահով պէտք է լինիլ թէ չպիտի մաշեցնէ ո՛չ ընդունարանն եւ ո՛չ ալ ծփին մարմինը:

Ընդունարանին վրայ ծփող գմբէթն կը կշռէ 95,000 քիլոկրամ: Արդարեւ զարմանալի է տեսնել այն հսկայ շէնքն, այդ ահաւին գմբէթն չորս վայրկեանի մէջ ինքն իւր վրայ դառնալ մեքենայի մը միջոցաւ, զորս կը շարժէ միակ գործաւոր մը: Երբ կայցելէինք անդ, տիկնայք կը ջանային դարձնել մեքենայն. կը զարմանային եւ կը զուարճանային տեսնելով թէ մէկ ձեռքով կրնային շարժման մէջ դնել ամբողջ մեքենայն:

Երբ Փարիզի հասարակութիւնն այցելէ այդ ճարտարական հրաշակերտն Պ. Էյֆէլի գործարանաց մէջ, որք բաց են ամենուն առջեւ, պիտի քակեն զայն եւ Նիս տանելով վերստին պիտի շինեն այն տեղւոյն վրայ որ բոլորած է: Այն ատեն, Պ. Պիշոֆսհայմի հոյակերտ դիտարանն ամբողջովին աւարտած պիտի լինի. երկրաբաժանական խորհուրդն անդ պիտի գումարի հոկտեմբեր ամսուն, եւ այդ առթիւ, հանդիսաւորապէս պիտի կատարեն այդ յիշատակարանին բացումը, մին գեղեցկագոյն նուէրներէն զոր անհատ մը մատուցած լինի երբէք գիտութեան ի Ֆրանսա:

ԳԱԽԱՌԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՅԹՔ

ԽՈՒԼԹԻԿ ԳԻՒՂ

Դ.

ՏՍՐԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենդեան ձրագալուցի պատարագի տան երբ վերաբերում կ'ըլլայ, մանր տըղաքներ ձեռքերին խնձոր բռնած « ձիվիլիլի » կը պոռան : Զատկի ձրագալուցին կարմիր հաւկիթներով « ձիվիլիլի » կ'ընեն : Իրիկուն « մարեմը » կ'ուտեն, տնէ տուն կը պտըտին ու աւետիքի երգեր կ'ըսեն . սոփորաբար տան երգիքէն ծակոտկէն աման մը, որին Ալէլու կ'ըսեն, կը կախեն ու ծըներգը ըսելէն վերջ տան բենիամինը կը դուլեն :

Վահան նստիր ծառի ճղին, ալէլուիս,
Վաճամ թափեր վի թեւերուն, »
Աստված տուիր եօթ գում ոչխար, »
Եօթ գում ոչխարի պճեղն ոսկի, »
Աստված տուիր եօթ գում մատակ, »
Եօթ գում մատկու պճեղն ոսկի, »
Գութան ի դաշտ կը բանի, »
Զարկամ ի դուռ կը պատռի, »
Տանտիկին ու կին ու կին, »
Սօկերդ խաղիւր ճուլլային, »
Գնա՛ դուռն մառանին, »

Երեք խնձոր բեր
Մէկ ասողին,
Մէկ լողին,
Մէկ ջաղամաթին :

Տան տիկինը խնձոր, չամիչ, ստակ կը լեցնէ Ալէլուի մէջ, ու պզտիկ հովիւները կը մեկնին :

Մեծ-Պահոց առջի օրն ամեն մարդ եկեղեցի կ'երթայ, որ քրո՛ւք . եթէ եկեղեցի չերթայ մէկն այսօր, տարեշրջանի մէջ իր եկեղեցի երթայն երկնքի գրքի մէջ չդրուիր . աղօթատումարն կը գոցուի : Եկեղեցիէն երբ դառնայ, տան տիկինն քիչ մը փոշի կուտայ տղայի մը ու տան երգիքը կը հանէ զայն . տղան փոշին երգիքի չորս կողմը կը լեցնէ ու « աղամ, աղամ, զի՛նչ աղամ » կը հարցնէ . « կարիճներն աղա՛ » կը պատասխանէ տնէն տանտիկինն, ու տղան փոշին ձեռքով երգիքի բոլորտիքը կը ցանէ . այս ձե-

ւով բոլոր չարածիններն աղալ կ'ուտայ տան տիկինն, որ իր տնէն անհետին անոնք : Կէս օրին « քօշիկ » կը խաղցնեն . տղայի մ'ե-տեւի ու առջեւի կողմէն մորթ կը կախեն, երեսը կ'ալրեն, գլուխը կը կապկպեն ու մէջքէն թուր մ'ու թեւէն անեղ մը կը ձըգեն . այս խրտուխակին « քօշիկ » կ'ըսեն . թաղի բոլոր տները կը պտըտին ու կը խաղան քօշիկն ու իր ընկերները : Ամեն մի կատակախաղի մէջ քօշիկն կը մեռնի ու կը յառնէ :

Տեառնընդառաջի առտուն թաղի տըղաքներն կը խմբուին, ու տընէ տուն կ'իյնան, փայտ կը ժողվեն . այս կրկուտով փայտագէտ մը կը շինեն, որին « Տէրնդէզ » — Տիրոջ գէզ, կ'ըսեն : Իրիկուն երբ եկեղեցիէն ելնեն, երգելով մեծ-Տէրնդէզի քով կ'երթան ու կը վառեն զայն տէրտէրներն : Թաղերու տղաքներն այս տեղէն կը վառեն հիմա իրենց « ծուպերն » — փայտամոմերն, ու կը վաղեն, որ ամեն մէկը շուտ մը իր թաղի Տէրնդէզը երթայ վառէ : Երբ Տէրնդէզի բոցը քիչ մը կը նստի, այն տարիի փեսաներն ու արու տղայ ունեցող հայրերը կը բռնեն, կրակի մէջ կը նետեն թաղի կըտրիճներն, անոնք ալ գինի եւ ուտելիք կը հրամցնեն թաղեցիներուն : Տէրնդէզի փոշին տեղացիք կը տանին կը ձգեն արտերն, որ արաի որդերն ցանքը չը կտրեն . ջերմողնւորն հաց կ'եփեն այս կրակի մէջ կ'ուտեն, որ չջերմեն : Թաղի տղաքներն ալ մեռնելու ու սուրբ տեղերու վրայ ծուպը կը տանին, կը տնկեն . անով երգիքն կը խաչակընքեն ու դուռներու պոչերը կը խանձեն, որպէս զի բոլոր չարիքներէն ապահովաբան իրենց տունն ու ինչքը :

Մեծ պահոց միջինքի օրն « պրտոն » — մեծ հաց մը կ'եփեն ու ստակ կամ ուրիշ նշանաբան մը կը դնեն անոր մէջ . իրիկուն տան տիկինն տնեցիներու թուով կը բաժնէ զան ու ամեն մէկուն կտոր մը կուտայ . որի բաժնի մէջ որ հացի նշանն ելնէ, կը համբուրէ, կը դնէ իր գրպանը, որովհետեւ հացի այս վիճակահանութեան մէջ տան բախտըն ինք կը չահի :

Մարտ 10ին տնեցիներէն մէկը տան դռները կը բանայ, պարկ մը կ'առնէ, կ'իյնայ տան մէջ ու չորս կողմը պարկով ծեծելով « զլլալս դո՛ւրս » կը պոռայ . զլլալը — ձմեռնուի, սատանան է : Զմեռնաբեւը վառտե-

լէն վերջ տան դռները կը դոցեն, տարեկան պարով կը խաչանդնեն դրան մէջքն ու խաչերկաթը կը դնեն սեմի վրայ, որ սատանան տուն չմտնէ:

Ծաղկազարդի կիրակի իրիկուն տղաքներն կ'երթան ժամտուն, դրան վրայ կը կայնին, ու եկեղեցի եկող պառաւները կը ծեծեն. ծեծ չուտելու համար չամիչ, սիսեռ կը ցրուեն ասոնք տղաքներուն: Վա՛յ անոր, որ տղաքներուն բան մը չտար. ծեծն անոր բաժինն է:

Աւագ հինգշաբթի իրիկուն տան մէջ եղած բոլոր ջրերը կը թափեն, որ Յուդան չգայ լուացուի անոնց մէջ. մածնի ամաններու վրայ ալ միայտի կամ բէւեռի խաչ մը կը դնեն:

Ջատկի առտուն հարսի տնէն հաւկիթ, չոր, համրիչ կօ կը դրկեն փեսային. փեսա-տնէն ալ միրգ, ստակ կը դրկեն հարսնտուն. ճաշէն վերջ դրեթէ կէս գիւղը գերեզմանատուն կ'երթայ. «Սընետեռ» կ'ըսեն ասոր: Սընետեռը երեք օր կը տեւէ, յաջորդ օրը Սատմախաչը կ'երթան, որ գիւղի արեւելակողմը կ'ընայ:

Համբարձման տղաքները փեսայ, աղջիկներն հարս կը շինեն, ու գիւղի մէջ պառտելով ստակ, եղ, հաւկիթ կը ժողվեն ու կ'երթան Պորդեր ըսուած արտերն կ'ըրօսնուն. գիւղացիներն ալ կ'երթան հոն: Համբարձման գիշերն ալ շատեր չեն քներ, որ լեռներու ու ծառերու «ողջոյն տալն» տեսնեն: Այս գիշեր լեռներն ու ծառերը մէկ մէկի քով կ'երթան ու մէկմէկ կ'ողջունեն. եթէ լեռնային այս փառքի քաջանի վայրկենին չընտելն ու տեսնէ մէկը զայն, ինչ որ միտաբերէ, կ'ստանայ, կ'ըսեն տեղացիքն: Հըրեաներու մեսիայի գիշերն է ասիկայ: Համբարձումէն մինչև Վարդավառ շատ տղաքներ ու աղջիկներ շարաթ ու կիրակի օրեր միայն կը զատկեն, բայց միս ու միգեղէն բնաւ չեն ուտեր. «Սուրբ կարապետի պահը» կ'ըսեն ասոր. շատեր եօթ տարի կը բռնեն այս պահը, որ Ս. Կարապետ իրենց փառքը կատարէ:

Վարդավառին ջուր կը ցանեն մէկմէկի վրայ. շատերն իրենց շորերով ցուրտ ջրի մէջ կը մտնեն այսօր. Աւետեաց օրն ալ այսպէս կ'ընեն: Հօտաղներն ծաղիկներով կը զարդարեն իրենց եղներն, ստակ, եղ ու հաւկիթ կը ժողվեն ու կ'երուխում կ'ընեն:

Յ. ՏՈՒՏՈՒԹԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԾՈՐՈՏԻԿԻ ՏԱՂ
(ՅԱՇԸԳ ՇԻՐԻՆԷ ԱՍԱՅԵԱԼ)

Մոռնդի էջայ էր դրեցա՛ք Մարթա,
կէնէ թուղթը առեր սիրով կը կարդայ.
Երգում արի Ներգի չառնիմ՝ չիմ երթայ,
Մակար հարիւ անգամ վարեա, խորոտիկ.
Դուն էկոր մօտիկ:

Ոսկի կ'ուզե՞ս, չեմ՝ խնայիր բռնուով ա՛ռ,
Ձի տուեցի, զարկ իմ գլխիս զօռով ա՛ռ.
Ալ է՞ր ինձմէն աճորտար՝ ու խռովար,
Սեւով սրգով օրերս անցան, խորոտիկ.
Դուն էկոր մօտիկ:

Ամառ եկաւ, էկո՛ւր, երէնք գիւղերը,
Ձեռք ձեռքի տամք վաղեմէ անուշ պաղերը.
Որթոտի տակ փռիմք գումաշ տեղերը (մահիճ),
Էին սիրով գրգտուիմք, խորոտիկ.
Տէ՛, էկուր մօտիկ:

Առտու էջայ արեւն ելլոյ լեռներէն,
Սոխակ, արտուտ թռին երթան բղիններէն.
Ես դուն երէնք, բերան բերի տեղերէն,
Ջրի քէնար երթամք նստիմք, խորոտիկ.
Տուն էկոր մօտիկ:

Կէս օր չեղած վաղեմէ նշի ծառի տակ,
Թաշտներու երգեր լսիմք անուշակ.
Խաղող մեխակ, ժողվիմ բերիմ, մանիշակ,
Սեղան շինիմ, կաթ ու կարագ, խորոտիկ.
Տէ՛, էկուր մօտիկ:

Էստուց ստեն հովը բրդի զովանամք,
Աղօթք ընեմք Տէր Յիսուսի գոհանամք.
Մեր մեղքերէն աւուր չարէն հեռանամք,
Չերար պաշտեմք դերար սիրեմք, խորոտիկ.
Տուն էկուր մօտիկ:

Մութը դառնայ աստղեր երէն բարձրանան,
Մեր սէր ու սիրա նորէն խօսին միանան.
Մեր մեղքիւն լուսին աստղեր թող տեսնան,
Ան ատեն իմ մահս է հալալ, խորոտիկ.
Տէ՛, էկուր մօտիկ:

Ես Շերինն եմ, Ամբայ՝ խողէն հեռացած,
Տունս, տեղս վերան արի խնդացած.
Սիրուդ միայն այրած, մոխիր եմ դարձած,
Հերիք այրես սիրտս այրես, մեղք է, խորոտիկ.
Դուն չե՞ս դար մօտիկ:

Հաւատեց
Հ. ԷԿԻՆԵԱՆ

(1) Ներշնչալ: (2) Տեղբանակերտ:

Ք Ա Ղ Ո Ի Ա Տ

Ե Ա Ր Ա Պ Ա Կ Ա Ն Լ Ր Ո Յ

11-17 ՄԱՅԻՍ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Տասնեւիններորդ դարու մեծագոյն դէմքերէն մին անհետացաւ : Ո՛չ եւս է Վիգոր Հիւկօ : Մայիս 10/22ին, ուրբաթ օր, երեկոյեան դէմ, 84 տարեկան հասակին մէջ Վիգոր Հիւկօ կնքեց իւր կեանք :

Այս հակիրճ տողերու մէջ անհնար է նըկարագրել հանրային սգոյ բոլոր այն մեծ ցոյցերն որք համայն Ֆրանսայի մէջ եւ կրնանք ըսել աշխարհի ամեն կողմեր եղան տիեզերահռչակ քերթողին մահուան առթիւ :

Ֆրանսական կառավարութիւնն որոշեց որ Հիւկօի մարմինն երեք օր ի տես հասարակութեան դրուի Արք տը Թըրօնֆի ներքեւ եւ յուղարկաւորութեան օրն իբրեւ ազգային սուգի օր նկատուի : Երեսօրեայ նական Ժողովն եւ Ծերակոյտը 50,000 Փըրանք քուէարկեցին Վիգոր Հիւկօի յուղարկաւորութեան ծախուց համար : Մահուան օրը, Ծերակոյտն՝ որոյ անդամ էր, վրակեց իւր նիստ ի նշան սգոյ :

Նախարարական հրամանագիր մը վերադարձնելով գրանթէոն իւր նախնական նպատակին, որ էր ամիսիկէ Ֆրանսայի մեծ մարդոց մարմինները, պատուիրեց Բանթէոնի մէջ թաղել Վիգոր Հիւկօի մարմինն :

Տիեզերահռչակ բանաստեղծը կը թողու երկու կտակ, մին մասնաւոր եւ կարճ, միւսը պաշտօնական եւ յոյժ ընդարձակ : Մասնաւոր կտակն է հետեւեալը .

«Բիսուն հաղար Փրանք կուտամ աղքատաց :

«Կը փափաքիմ գերեզմանատուն տարուիլ անոնց (աղքատաց) դադաղին մէջ :

«Կը մերժեմ ամեն եկեղեցեաց դամբանականներն, եւ կը խնդրեմ աղօթք մը ամեն հոգիներէն :

«Կը հաւատամ Աստուծոյ :

ՎԻՔՏՈՐ ՀԻԿՈ

Եւրոպիոյ ամեն մայրաքաղաքաց եւ դէլսաւոր քաղաքաց լրագիրք մեծ գովեստիւք կը խօսին Վիգոր Հիւկօյի վրայ, եւ կը յայտարարեն թէ ո՛չ միայն Ֆրանսա, այլ բոլոր քաղաքակիրթ աշխարհը մեծ կորուստ մ'ըրաւ յանձին նորա :

Վիգոր Հիւկօյի թողած հարստութիւնը կը հաշուի 5 միլիոն Փրանք, որոյ 5 միլիոնն անգլ. արծեթուղթ, 1/10 5. մնացեալը Պէլճիոյ Պանքայի բաժնեթուղթ եւ Փրանսական արծեթուղթեր, զորս գնեց Փրանսական երկրին գերմանական գրաւումէ ազատման համար եղած ազգային փոխառութեան պահուէն : Ռոշիլտի քով ի պահ դրուած են իւր բոլոր թուղթեր : Վիգոր Հիւկօյի միակ կալուածներն են հող մը իւր վարձով բնակած տան մօտ (եւ այս հողի վրայ տուն մը շինել ձեռնարկած էր) ինչպէս նաեւ Կէրնէ կղզւոյն մէջ ունեցած տունը :

Վիգոր Հիւկօ անտիպ կարեւոր եւ ընդարձակ երկեր կը թողու : Սոցա մէջ կայ թատերագութիւն մը, Նօթ-Բէն. ուրիշ մը՝ Թարրոն յաղարարեան, եւ քերթուածներ : Իւր կտակ կ'որոշէ սոցա հրատարակութեան թըւականն եւ եղանակը :

Լոնտոնէ կը հեռագրուի մայիս 24ին . Աֆղանստանի վերաբերեալ բանակցութեանց կասումը բոլորովին դիպուածական պարագայից կը վերադրուի, որք կշիւ չեն կրնար ունենալ գործին ելից վրայ : Ըստ վերջին տեղեկութեանց, Ռուսիա Էմիրին կը թողու զՄարուշաք եւ Զիւլֆիքարի կիճերը :

— Անգլ. նախարար Լորտ Ռոզպէրիի ի Պերլին ուղեւորութիւնը շատ կը զբաղեցնէ քաղաքական ակմբոց ուշադրութիւնն ի Լոնտոն : Կը խորհուի թէ Եգիպտոսի նկատմամբ Անգլիոյ ասպագայ ընթացքը կախում պիտի ունենայ Լորտ Ռոզպէրիի ձեռք բերելք արդիւնքէն, որոյ գլխաւոր պաշտօնն է իմանալ Պիզմարք իշխանին տեսութիւններն ու դիտաւորութիւնները :

— Պ. Կլատտոն յայտարարեց Երեսօր Ժողովոյ մայիս 21ի նստին մէջ թէ, «Բէնչե տեհի դէպքին իրաւարարութեան մը յանձնման պայմանք չեն որոշուած դեռ, եւ իրաւարարն ալ վերջնապէս չէ անուանեալ :

— Լորտ Տըֆրին այս ապրիլ ամիսէն

մինչեւ յուլիսի սկիզբը պատերազմական ծախք ըրած է և կ'ընէ 76½ միլիոն ֆր․, և բացէն ալ 585,000 անգլ․ ոսկի թնդաւնօթներու համար :

— Միաց. Նահանգաց մէջ, ի Սինսինատի, մայիս 21ին մեծ տպարան մը այրեցաւ, և 17 անձինք հրոյ ճարակ եղան :

— Ըստ նորագոյն լրոց, զԲեդրսպուրի Պալթիկ ծովուն հետ միացնող ջրանցին հանդիսաւոր բացումը պիտի կատարուէր մայիս 15/27 ին : Այս առթիւ կայսերական զօսանաւք և մի քանի մարտանաւք Գրոնչդատի ջրանցէն մինչեւ Բեդրսպուրի պիտի երթային, և ապա վաճառարած նաւուց անցուդարձը պիտի սկսէր :

— Ռուս կառավարութիւնն որոշեց Կեդր. Ասիոյ նոր գրաւեալ վայրաց մէջ ջրանցներ բանալ, հողերուն ոռոգման և արգիւնաւորման համար, և այս գործողութեանց վրայ հսկելու պաշտօնով դիւսաւոր ճարտարագէտ մը ղրկեց :

— Պեճիկ Լէորդտ թաղաւորն ի Պերլին այցելութենէն օգուտ կը բաղէ՝ Գոնկոյի նոր Պետութեան համար փոխառութիւն մը կնքելու ջանքեր ընելով :

— Պաֆֆֆֆէն լրագիրը մայիս 20ին վերսկսաւ հրատարակելի ի Գահիրէ : Պ. Կըլաւըսթոնի եզրկատական աշխարհավարութեան համար նոր անյաջողութիւն մը կը նկատուի այս :

— Տիգրան փաշա մայիս 20ին տեսակցեցաւ Պ. աք Ֆրէսինէի հետ, Եզրպատի օտար մամուլն նկատմամբ հետեւելի ընթացից վրայ համաձայնութեան մը գալու համար :

— Տոնկոլայի թորման որոշումն ընդհանուր դժգոհութիւն կը յարուցանէ Պ. Կլաւըսթոնի նախարարութեան դէմ :

— Սրահապար կը ծանուցանէ մայիս 21 թուով թէ ռուս կառավարութիւնն յոյժ ծանր պահանջումներ յարուցած է : Ռուսիա չընդունիր որ Հերադ ամրացուի ընդ տնօրինութեամբ Անգլիացւոց, եւ աւելի յառաջ երթալով, կը պահանջէ որ բնաւ ամրութիւն չընտրի աֆղանեան սահմանաց վրայ : Կը կարծուի թէ Ռուսիոյ այս նոր պահանջմանց պատճառաւ է որ Անգլիա մաս մը զօրք վար կը դնէ յԱլեքսանդրիա, եւ կը շարունակէ իւր պատրաստութիւններ :

— Ֆրանսական, գերմանական, աւստրիական գործակալաց բողոքին վրայ, եզրպատական կառավարութիւնն ետ առաւ իւր հրամանագիր, որով 100ին 5 վար կը դնէր վճարելի կտրօններէն : Այս կարգադրութիւն դեռ վերջնականապէս վաւերացեալ չէ տէրութիւններէն : Այս յետս կոչման վրայ, խտրական կառավարութիւնը կը պարտաւորի 100,000 անգլ․ ոսկի ետ տալ արծեալեաց :

— Աֆղանաց Էմիրն յայտարարութիւն մը հանեց, գովելով իւր զօրաց ի Բէնջտեհ ցուցած քաջութիւնն, եւ անգլիական դաշնակցութեան օգտակարութիւնը բացատրելով : Էմիրն անընդհատ օգնութիւն կը ղրկէ Հերադ, որոյ պաշտպանութեան յատկացուցած է նաեւ այն թնդանօթներ զորս վերջերս իրեն նուիրեց Հնդկաստանի կառավարութիւնը :

— Հնդկային սահմանադիւսէն անդին երկաթուղւոյ շինութիւնը կը շարունակեն Անգլիացիք, տեսնելով Ռուսաց նոյնօրինակ աշխատութիւնները : Մինչև Քանտահար երկաթուղին երկարելու համար պէտք եղած միւրքեր ապսպրուած են յԱնգլիա :

— Ռուս կառավարութիւնը խոշոր տեսակէն 100 թնդանօթներ ապսպրած է Ասիական ամրութեանց համար :

— Պերլինի ռուսական նոր դեսպան Շուվալով Կոմսը մեկնեցաւ Բեդրսպուրիէ ամսոյ 5ին : Նոյն ամսոյն 6ին երկար տեսութիւն ո՞ւնեցաւ եւ ճաշեց Պիզմարք իշխանի հետ : Ապա Վիլհէլմ Կայսեր ներկայացաւ, թէ եւ Ն. Կ. Վեհափառութիւն շատ այցելութիւն ընդունելու վիճակի մէջ չէր : Կարեւորութիւն կը արուի այս տեսակցութեանց :

Ն Ե Ր Ք Ի Ն

Ալեքսանդր փաշա Քարաթէոտորի՝ երբեմն նախարար արտաքին գործոց, անուանեցաւ Սամսի կուսակալ և Վեհ. Սուլթանին ներկայանալէ եւ նախարարաց այցելութիւն տալէ յետոյ, հինգշաբթի օրը մեկնեցաւ յիւր նոր պաշտօնատեղին, ընկերակցութեամբ այն Սամսոցի պատգամաւո-

րաց որք մայրաքաղաքս եկած էին Կղզւոյն երեսօի . Ժողովոյ գահագատներն յայտնելու նախորդ կուսակալ Ատոսիտէս փաշայի նըկատմամբ եւ նոր կուսակալի մ'ըտրութիւնը խնդրելու համար :

— Սամոսի նախորդ կուսակալ Ատոսիտէս փաշա Կղզիէն մեկնելու արտօնութիւն ստացած լինելով Բ. Դռնէն, այս երկուշաբթի օր մայրաքաղաքս կ'սպասուի :

— Վեհ . Սուլթանն հրամայած լինելով որ Արեւելեան Բուսէլի մէջ դռնուող փոքր կալուածները Ֆալի վերածուին, սոյն կայմերական հրամանն հաղորդուեցաւ յիշեալ գաւառի կուսակալութեան :

— Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը պաշտօնական աղբով մը կը ծանուցանէ թէ Կայս. կառավարութիւնն որոշած է մասնաւոր ձեռնարկուաց յանձնել Պէրութի, Աքեայի, Եաֆայի, Տրիպոլսոյ (Սուրիա) եւ Սայիտաի նաւահանդատաց շինութիւնն : Այն անձինք որք կ'ուզեն ըստանձնել սոյն ձեռնարկութիւնները, կը հըրաւիրուին ներկայանալ Կամրջոց եւ Խըճուղեաց վարչութեան պաշտօնատունն հարկ եղած պայմանաց տեղեկանալու համար :

— Ելմտական նախարարութիւնը չըջաբերական մ'ուղղելով գաւառաց կուսակալներուն, ծանոց թէ Ժահէլէ մնացած կալուածոց՝ ի հաշիւ պետական գանձուն վաճառման եղանակը փոխուած է : Ըստ վերջին տնօրինութեան, այս վաճառում փոխանակ Եփէֆէ տրոց վերատեսչութեան ձեռամբ պիտի կատարուի :

— Ներքին գործոց նախարարութիւնը չըջաբերականաւ մը հրահանգ ղրկեց գաւառական բոլոր կուսակալութեանց որ այսուհետեւ Գայաֆա մը կամ Ֆափէ մը սլաշտօնանկ չընեն կամ այլուր պաշտօնի չղրկեն մինչեւ որ պատճառները չհաղորդեն Բ. Դըրան եւ հրահանգ չստանան :

— Միտիայի Յունաց Մետրոպոլիտի փոխանորդին եւ Թադ. Խորհրդոյ երկու անդամոց ստորագրութեամբ մայիս 14 թուով հետեւեալ հեռագիրը կը կարգանք Հափէֆէի մէջ .

« Տեղւոյս ընդհանուր դատախազի օգնականի փոխանորդն՝ Հափըզ Մէհմէտ էֆէնտի, առանց ո՛ր եւ է պարտականութեան եւ իրաւասութեան, ոստիկանու-

թեան հրաման տալով քանդել տուաւ մեր եկեղեցւոյն գետնի պատերն ու հիմքը . պարտուպառաջը տնօրինելու համար գիւմած ենք առ որ անկ է . զը խնդրենք որ դուք եւս պէտք եղած օղնութիւնը չզլանաք մեզ » :

— Պուլլար թերթերն հետեւեալ յայտարարութիւնն հրատարակած են :

« Իսլիմիայի մէջ գտնուող ապստամբական Պուլլար մասնախմբի անդամք մա իս 11ին ի ժողով գումարուելով քաղաքէն կէս ժամ հեռաւորութիւն ունեցող Իսվէթ Բէգթա վանքին մէջ, պիտի նուիրագործեն այն ապստամբութեան դրօշակն, որ 1877 մայիսի 11ին յանձնուած էր Ռուսաստանի Սամարա քաղաքի Պուլլար ապստամբաց, և հանդէս մը պիտի կատարեն հոն ի յիշատակ այն Պուլլար ապստամբաց որք ասկէ 8 տարի առաջ Պուլլարիոյ անկախութեան աշխատելու եւ արիւն թափելու համար երդում ըրած էին : Վանքին մօտերը զըտնուող սեպածեւ ժայռերու վրայ, զորս երբեմն Պուլլարք իրենց ապաստան ընտրած էին, ահագին առիւծ մը պիտի նկարուի . դրօշակներ սլարգած՝ որոց վրայ ապստամբութեան Ժահ բառերը պիտի կարդացուին, թափօրը նուագածուաց խմբի մ'առաջնորդութեամբ վանուց շուրջը պիտի պտտի » :

« Արդ, Իսլիմիայի Երբգա անուն ապստամբական մասնախմբին հրաւէր կը կարգայ բոլոր այն Պուլլարաց, որք իրենց երակաց մէջ Պուլլար արիւն կը կրեն եւ կը սիրեն աղբն ու հայրենիքը, ներկայ գըտնուիլ սոյն տօնախմբութեան հանդիսին որ Պուլլարաց Կ. Պոլսոյ հնգադարեան գերութեանէն ազատուելէն յետոյ, առաջին անգամ է որ պիտի կատարուի » :

Թէրճեմալ Հափէֆէ վերոգրեալ տողերն արտատպած է « Կարեւոր Յայտարարութիւն » խորագրոյն ներքեւ :

— Յունաց Ամեն . Ս. Պատրիարքն իւր բնակութիւնն հաստատած է Հէյպէլի կղզին ուր պիտի անցունէ ամբան եղանակը, վատառողջութիւնը դարմանելու համար :

— Ռուսոյ-աֆղան սահմանադիմոյ դըման անգլիացի պատուիրակ՝ զօրավար Սըր Բէգէր Լըմստէն մայրաքաղաքէս պիտի անցնի Լոնտրա երթալու համար :

Անգլիացի զօրավարը մեկնած է արդէն

Պաթուկէն և այս օր մայրաքաղաքս կ'սպասուէի ուստից պիտի մեկնի երեքշաբթի օրը :

— Վերջին ժամանակներս Ադրիանուպոլսոյ մէջ ափիոնի մշակութեան փորձեր կատարուելով, կատարելապէս յաջողած են: Գաւառին կուսական ուղելով քաջալերել այս մշակութիւնն, որ կրնայ արտածութեան աղբիւր մը լինել երկրագործ դասուն համար, Կայս. հրաման խնդրած եւ ստացած է, որով ափիոնի մշակութիւնն երեք տարի ազատ պիտի լինի տասանորդի եւ այլ տուրքերէ :

Հետեւաբար Ադրիանուպոլսոյ չըջակայ դաւառակաց կառավարիչը հրահանգ ստացած են ծանուցանել զայս երկրագործ դասուն եւ յանձնարարել անոնց որ ափիոնի մշակութիւնն յառաջ տանին :

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը դեսպանաց փոխադարձ այցելութեան գնաց երէկ եւ առջի օր :

— Ս. Պատրիարք Հայրը շաբթուս մէջ այցելութիւն տուաւ Յունաց Ամեն. Պատրիքին ի Ֆէնէր, ընկերակցութեամբ երկու եւ պիսկոպոսաց :

Յունաց Պատրիարքական Փոխանորդը քանի մը վարդապետներով դիմաւորեց զՆորին Սրբազնութիւնն՝ զոր երգեցիկ մանկանց առաջնորդութեամբ հրաւիրեց Պատրիարքականի մեծ դահլիճն ուր զՆ. Սրբազնութիւնն կարգաւ դիմաւորեցին Սինողականք, իրենց զլուխ ունենալով Ամեն. Յովակիմ Դ. Պատրիարքն որ մինչեւ սանդուխի զլուխն եկած էր. անդ երկու Պատրիարքունք ողջագուրեցին զիրար սիրալիր կերպիւ :

Ընդունելութիւնք եղան Պատրիարքարանի մէջ դահլիճն մէջ ուր րազմեցան երկու Պատրիարքունք, Տիմոթէոս Եպիսկ. Սափրիչեան եւ համայն Սինողականք :

Անդ, պարտու պատշաճ շնորհաւորութիւններէ յետոյ, տեսակցեցան յոյժ համակրանօք եւ մեր Ս. Պատրիարքն հրաժեշտ առաւ Յովակիմ Դ. Պատրիարքէն, շնորհակալ լինելով որ Ն. Սրբազնութիւնն՝ հակառակ իւր անձնական տկարութեան, հաճած էր անձամբ ընդունիլ զիրքն այսքան մեծարանօք :

Ամեն. Յարութիւն Պատրիարք մեկնեցաւ Պատրիարքարանէն, դարձեալ առաջնորդութեամբ վարդապետաց եւ երգեցիկ դպրաց, եւ Նկեղեցի մտաւ որ փառաւորապէս լուսավառուած էր եւ ուր ընցուած էր խուռն բազմութիւն, Ս. Պատրիարքն հրաւիրուեցաւ բազմիւ Պատրիարքական աթոռին վրայ՝ որ յատկապէս չքեղաշարդեալ էր, եւ անտի օրհնեց ներկայ Յոյն ժողովուրդը, եւ կեղեցական դասն, եւ պարագային յարմար աղօթք և բարեմաղթութիւններ կատարեց :

Ապա, հանդիսիւ մեկնեցաւ եկեղեցիէն եւ կառք նստելով, վերադարձաւ ի Գում-Գաբու : Յունաց Պատրիարքական Փոխանորդն երկու վարդապետով ընկերակցեցաւ Ն. Սրբազնութեան մինչեւ կառքին դուռը :

— Ահաւասիկ պատճէնն այն շնորհաւորական հեռագրի զոր Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրն ուղղած է Էջմիածնայ Ընտրողական Ժողովոյ Ս. Նախագահին, ըստ որոյման խառն ժողովոյ :

« Առ Սրբազան Մկրտիչ Արքեպիսկոպոս, Նախագահ Ազգային Ընտրողական Ժողովոյ :

« Մէք կեդրոնական վարչութեամբ խնդրութեամբ լսեցինք Մեղիսեղեկ Սրբազանի ընտրութիւնն յԱթոռ կաթողիկոսութեան. շնորհաւորելով Ընտրողական Ժողովն, մեր շնորհակալքը կը մատուցանեմք Ձեզ :

Պատրիարք Կ. Պոլսոյ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ

Յ Մայիս

— Կրօնական Ժողովն դումարեցաւ այս չորեքշաբթի օր ընդ նախադահլութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ ատենապետութեամբ Գեր. Գարեգին վարդապետի թաթարեան :

Ըստ տրամադրութեան Ազգ. Սահմանադրութեան, Ժողովոյ առաջին տարեշրջանը լրացած եւ հետեւաբար զիւանի պաշտօնը դադրած լինելով, Ժողովը ձեռնարկեց նախ եւ առաջ նոր դիւանի ընտրութեան զոր հետեւեալ կերպիւ կազմեց գաղտնի քուէկութեամբ .

Գեր. Տ. Խորէն Արքեպ. Նար-Պէյ Ա. Ատենապետ
» Գարեգին Վրդ. Թաթարեան Բ. »
» Յակօբ Վրդ. Ա. Փափագեան Ա. Ատենադպիր
» Յովհաննէս Վրդ. Արշարունի Բ. »

Գեր. Նար-Պէյ Սրբազան շնորհակալութիւն յայտնեց Ժողովին իւր վերընտրութեան եւ իւր պաշտօնակցաց ընտրութեան համար, յետ որոյ նորընտիր դիւանն՝ հրա-

ւերմամբ Ս. Նախագահին՝ անցաւ ի գլուխ իւր պաշտօնին եւ ժողովն զբաղեցաւ ընթացիկ խնդրոց կարգադրութեամբ :

Նկատողութեան առնելով Տիգրանակերտի Գաղաքական ժողովոյ ստորագրութեամբ հասած հեռագիր մը, որ կը յայտնէր թէ 1500 տուն Ասորիք պատրաստ են Հայաստանեայց եկեղեցւոյ գիրկը դիմելու, եթէ Տիգրանեան Մկրտիչ եպիսկոպոս իրենց առաջնորդ ընտրուի, որոնց հիւսիսը Տիգրանակերտի ազգ. վարչութեան թէ մինչեւ ո՞ր աստիճան ստոյգ է այս լուր եւ թէ առայդ տնօրինութիւն մ'ընթա՞ծ է :

Որոնց Սեւանիկ զրկել Պուքրէշի Արժ. Տ. Միքայէլ քահանայն, անդ քահանայագործութիւն ընելու համար, որոյ պէտքն յոյժ զգալի եղած է :

Արդընի Բարձրահայեայց Ս. Աստուածածնի վանուց Հայրը վախճանած լինելով, որոշուեցաւ Մարդուանի քարոզիչ Փափազեան Գեր. Տ. Յովհաննէս վարդապետին յանձնել յիշեալ վանահայրութեան պաշտօնըն, ըստ օրինի խառն ժողովոյ կարծիքն առնել յետոյ :

— Տփղիսէն կը հեռագրեն առ Բոսնի Կաթիկէս :

« Մայիս 4ին, Էջմիածնայ Սինոդի պատգամաւորութիւնը (որ կաղմուած էր Շամախու առաջնորդ Թադէոս եպիսկոպոսէն եւ Տփղիսի եւ Ղարաբաղի թեմերու աշխարհական ներկայացուցիչներէն) Կաւկասիոյ զխաւսոր կառավարչին ներկայացուց ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան ցանկը՝ վեհափառ Կայսեր վաւերացման մատուցանելու համար : Յետ այսորիկ, Թադէոս եպիսկոպոս՝ հայ հասարակութեան հաւատարիմ հպատակութեան զգացումն յայտնեց Հայոց Եկեղեցւոյ «Գերագոյն հովանաւորող»ին (Չարին) : Իշխան Գոնդուկով Կորսակով իւր գոհունակութիւնն յայտնեց Հայ ազգի հաւատարմութեան համար, դովեց երկրագործ եւ վաճառական դասերն որք Կաւկասիոյ ծաղկման եւ զարգացման աշխատողներն են եւ ընտրութեան հաստատման համար յոյս տուաւ » :

— Յաւալի դէպք մը տեղի ունեցաւ անցեալ կիրակի. օր Մայր Եկեղեցւոյ մէջ :

Գանի մը հարիւր գաւառացի ազգայինք Ս. Պատարագի յիշատակութեան ժամանակ աղմուկ եւ ձայն բարձրացնելով «Էջմիածնայ կաթողիկոսութեան յիշատակութիւնը չենք ուզեր, անկցին Սինոդականք եւ համախոհք » գոչել սկսան : Մեծ

Ժխոր եւ շփոթութիւնք տիրեցին ասոր վերայ : Ամեն. Ս. Պատրիարք Հայրն բացակայ գտնուելով, Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հայրը վուրթաց ի Մայր Եկեղեցի՝ անկարգութեանց առաջն՝ առնելու համար : Այս միջոցին ռատիկաններ բերուած էին և կը պատրաստուէին ձերբակալել անկարգութեանց առիթ տուող անձինքն եւ ժողովուրդն ընդդիմանալով չէր ուզեր ոչ զոր ձեռք տալ :

Գեր. Փոխանորդ Հայրն յաջողեցաւ բարեբաղդաբար խառնել մտքերն հանդարտեցնելով, ռատիկաններն հեռացնել առանց մէկու ձերբակալման :

Ս. Պատրիարք Հօր հրամանաւ քննութիւն բացուած է այս դէպքի հեղինակները զըսնելու համար :

— Տրապիզոնէն առնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Արժ. Տ. Մկրեան Հայրն անդ հասեր է, ուր պիտի մնայ շաբաթի մը շափ տեղւոյն ազգայնոց խնդրանօք :

— Դարձեալ Տրապիզոնէն՝ առաջնորդական Տեղապահին եւ գաւառական ժողովոյ գիւնի ստորագրութեամբ ի Պատրիարքարան հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Գեր. Գարեգին Մ. վարդապետ Սրուանձտեանց գաւառին առաջնորդ ընտրուած է :

Տրապիզոնէն շնորհաւորական բազում հեռագիրք հասած են այս առթիւ առ Գեր. Հայր Սրուանձտեանց :

Գոհութեամբ կը հրատարակենք հետեւեալ նամակը :

« Մայիս լրագրոյ 3752 թուոյն մէջ Կրտուց — Անապատի Միաբանութեան վերաբերեալ լուր մը հրատարակուած էր . իրր թէ տեղւոյն Միաբանութիւնը վանքի արծաթեղէնները հալեցուցնելով յամուէտս վառներ է եւ : Մենք յիշեալ վանքին Միաբան գրով, եւ հետեւաբար նոյն Միաբանութեան ուղղամուտիւնն եւ երկիւղածութիւնը գիտնալով, թէպէտեւ կարի անհաւատալի թուեցաւ մեզ յիշեալ զրոյցն, սակայն խոհեմութիւն համարեցանք այս մասին պէտք եղած քննութիւնը կատարել, որոյ եւ արդիւնքն կատարելապէս համաձայն եղաւ մեր համոզման : Վասն որոյ, թէ՛ ի գիտութիւն՝ որոյ ա'նկ է, եւ թէ՛ ի բուժումն գայթակղեալ մտաց, ներկայիս կը յայտարարենք թէ այսպիսի եղելութիւն մը բնաւ տեղի չէ՝ ունեցած յիշեալ վանքին մէջ, եւ թէ այդ անհիմն լուրը կա'մ թիւրխմացութեան մը արդիւնք է, եւ կա'մ չարամտաց ոմանց բարուրանքն է :

1883 մայիս 6

Կ. Պոլիս


Տ. Վ. ՄԱԺԱԿՈՒՆԻ

Միաբան Կապոյ-Անապատի

Ս Է Յ Տ Է Լ ԵՒ Ն Ա Ի Մ Ա Ն

ՏՐԷԶՏԱ [ՍԱՔԱՍՈՒՄ]

Եւրոպայի մէջ կա-
րի մեքենայ չինող
ամենամեծ գործա-
րանն է :




Գործարանատեղաք
«Օբեժնա» Սափանիա
Րէճիա» կոչուած հրա-
շակաւոր ձեռքի մե-
քենային :

ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ, ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ, ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ

Ընտանեաց համար
ձեռքով և ոտքով բա-
նող մեքենայք :

ՆԱԻՄԱՆ մեքենայն B

Մոտիվներու և
դերձակներու համար
մեքենայք :



Այս մեքենայն իւր թւին տակ
լայնիկէկ տեղ մ'ունի, ինչպէս նաև
ամեն տեսակ կարերու համար նո-
րանոր գործիքներ, և շատ դի-
րութեամբ լաւ

ՕՂԱԿ

չինելու համար մասնաւոր գոր-
ծիք մը :

Այդ մեքենային համար աշ-
խարհիս ամեն կողմ արտօնու-
թիւն առնուած է :

Ծանօթ. — Այդ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԸ չտեսած՝ կարի մեքենայ մի՛ գնէք :

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆՆԵՐ



ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԶՐԻ ԿՈՒՍՈՒՅՈՒԻ

Ընտանեաց համար օղակի գործիք ղՃ 75
Դերձակաց » » » 125

Թուրքիոյ և Պուլկարիոյ համար
գործակալ և մթերանոցապետ
ԷՄ. Ժ. ՄԷՐՃԱՆՕՅ

Կ. Պոլիս, Համբուրցո խան, Թիւ 47

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆՆԵՐ



Ամեն տեսակէն 1500 մեքենայ միշտ պատրաստ կը գտնուին :



ՀՐԴԵՂԻ ԴԵՄ ԱՊԱՀՈՎԱԳԻՐՈՒԹԻՒՆ



NORTH BRITISH AND MERCANTILE
Insurance company
ՆՈՐԹ-Ն ԴԻԹԻՇ ԷՆՊ ՄԵՐԿԱՆԹԻՆԻՍ

Հանրային և Էպիսկոպոսական ապահովումներ

Ընկերություն	Մնացուցիկ
Արտոնադրողական	3,000,000
Բաժանորդագրողական	2,500,000
Վճարական	625,000
Պահեստի դրամ հրդեհի պատահանումներից	1,592,235
Կենսաբանական պատահանումներից	3,841,194
Դեմ պահեստի դրամ	6,058,429
Հրդեհի ծիւղէն հասոյթ	1,186,865
1883 տարւոյ	551,307
Կենսաբանական ծիւղէն հասոյթ	4,738,172
1883 տարւոյ	

NORTHERN
Assurance company
ՆՕՐԹ-Ն ԷՆՍ

Հանրային և Էպիսկոպոսական ապահովումներ

Ընկերություն	Մնացուցիկ
Բաժանորդագրողական	3,000,000
Վճարական	300,000
Պահեստի դրամ հրդեհի պատահանումներից	311,871
Կենսաբանական պատահանումներից	1,778,300
Դեմ պահեստի դրամ	2,390,171
Հրդեհի ծիւղէն հասոյթ	520,206
1883 տարւոյ	251,572
Կենսաբանական ծիւղէն հասոյթ	771,778
1883 տարւոյ	

Ստորագրեալն իւր բազմաթիւ յաճախորդաց և քաղաքիս ընդհանուր յարգոյ հասարակութեան կը ծանուցանէ թէ ինքն վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուի, որով հրդեհի դեմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանէ։ Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալովն ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բանողներու ինքզինք ներկայացնել։

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնք կրնան ընդունել, ինչպէս Բերայի, Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, իոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն և գաւառները։

MARITIME
Insurance Cie limited of Liverpool
Capital Lt. 500,000

ՄԱՐԻԹԱՅՄ

Մոլային ապահովումներ ընկերություն
Դրամադրութիւն 500,000 Անգլ. փրա

Ստորագրեալը, շրջանաւերու և առաջատանաւերու մէջ ի վաճառքներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած է ընկերութեան կողմէ։

Գիններուն և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուղղութեամբ պէտք է դիմեն Ղալաթա, Փոմիսիօն խանի անկիւնը երկաթէ կամուրջին վրայ նայող սենեակին, առ

Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակատար յեշտ Ընկերություն

ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈՅԵԱՆ

Արտոնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵԻԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ